# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՊՐԱԿՏԻԿԱ ԿԱՐԻԵՐԱ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ

Աշխատաշուկայի ուսումնասիրում

Արտաքին շահակիցների հետ ինստիտուցիոնալ հարաբերությունների ստեղծում

Բուհ-շրջանավարտ , Բուհ-գործատու համագործակցային կապերի զարգացում

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագրերի արդիականացում և համապատասխանեցում միջազային չափորոշիչներին և չափանիշներին

Կրթական գործընթացի կազմակերպման նոր ձևաչափի ներդրում

Ընդունելության քննությունների նորմատիվային պահանջների վերանայում և արդիականացում

Գիտական դրամաշնորհային ծրագրերի հայտավորում /12 ծրագիր/:

Գիտական աշխատանքների կատարման խրախուսում

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հորիզոնական ինտեգրացիա և համագործակցային միջավայրի ձևավորում

Հակակշիռների և փոխզսպումների մեխանիզմների ներդրում

Ֆինանսների արդյունավետ կառավարում

## ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Օտար լեզվով կրթական ծրագրերի մեկնարկ

Արտասահմանյան ուսանողների ներգրավում

Միջազգային դրամաշնորհային ծրագրերի ներկայացում

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց բուհում աշխատանքով ապահովում

Ներառական լսարանի բացում

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Բուհի արտաքին իմիջի ռեբրենդինգ

Բուհի ճանաչելիության բարձրացում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀՖԿՍՊԻ ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյան

Դաստիարակել կրթված սերունդ, պատրաստել որակյալ և բանիմաց մասնագետ, ունենալ մրցունակ գիտելիքներով աշխատակից. հենց այս նպատակների իրականացմանն են ուղղված իմ գործունեության հիմնական վեկտորները, հենց այս նպատակների իրականացմանն է ծառայել իմ՝ որպես Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատարի, գործունեությունը:

Մեկ ու կես տարի առաջ ստանձնելով Հայաստանի Հանրապետության մարզական միակ բուհի ղեկավարությունը, սրտացավությամբ և մեծ պատասխանատվությամբ մեր մեծ թիմի հետ միասին ձեռնամուխ ենք եղել ինստիտուտի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Զարգացման նախանշված մակարդակին հասնելու համար իրականացվել են բարեփոխումների համալիր ծրագրեր՝ կրթության որակի բարձրացման, աշխատանքների համակարգման, կրթական նոր ծրագրերի ներդրման, բուհի

միջազգայնացման, գիտահետազոտական աշխատանքների շրջանակի մեծացման, աշխատակազմի որակավորման բարձրացման, բուհի շենքային պայմանների և լսարանների արդիականացման ուղղություններով: Թվարկված աշխատանքներից շատերն արդեն տվել են իրենց արդյունքները, որոշները գտնվում են իրագործման փուլում, իսկ մի քանիսը դեռ սաղմնային վիճակում են: Սակայն, ես լիահույս եմ, որ մեր ինստիտուտի բանիմաց աշխատակազմն իզորու է վերջնական ավարտին հասցնել այս պահին բուհում ընթացող բարեփոխումների գործընթացը:

Ինքս լինելով հայկական սպորտի ներկայացուցիչ, երկար տարիներ աշխատելով հայկական բուհական համակարգում և իրատեսորեն գնահատելով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մասնագիտական ներուժը և ոլորտային կարողունակությունը, մեր բուհի համար կանխատեսում եմ հավակնոտ և լուրջ դերակատարություն՝ հայկական սպորտի զարգացման, ֆիզիկական դաստիարակության ոլորտի մասնագետների պատրաստման, ինչպես նաև առողջարարական սպորտի և առողջ ապրելակերպի գաղափարների տարածման ուղղությամբ:

Վստահ եմ, որ Հայաստանի ֆիզիական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը շարունակելու է իր 75–ամյա ուղին՝ Հայաստանի Հանրապետությունում մնալով ֆիզիկական դաստիարակության և սպորտի, մարզական լրագրության և սպորտային հոգեբանության, ֆիզիկական վերականգման և սպորտի կառավարման ոլորտներում բանիմաց, որակյալ և կարողունակ մասնագետներ պատրաստող առաջատար բուհ:

# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2019-2020 ուսումնական տարում ինստիտուտը ղեկավարվել և գործել է՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնակարգի, բուհի կանոնակարգի, բուհի կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի որոշումների ու կարգադրությունների համաձայն:

2019-2020 ուսումնական տարվա ընթացքում ինստիտուտում իրականացվել են լայնածավալ բարեփոխումներ, որի նպատակն էր՝ ընդունել ժամանակակից մարտահրավերները և բուհի ռազմավարության սկզբունքները, արձանագրել առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք նպատակաուղղված են բուհի ընդհանուր վարկանիշի և մասնավորապես՝ բուհում իրականացվող կրթության որակի բարձրացմանը:

Կրթական գործընթացի և դասավանդման մեթոդների որակի բարձրացմանը նպաստել են նորագույն տեխնոլոգիաների ներդրման, գիտելիքների հաղորդման, դասախոսներին գիտամեթոդական աշխատանքների մեջ ընդգրկելու ուղղությամբ կատարված փոխկապակցված համալիր գործընթացները: Բուհի բոլոր մասնագիտական ամբիոններում կիրառվել են մանկավարժական և գիտահետազոտական ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիական մոտեցումներ:

Ներկայացված հաշվետվության մեջ ներառված են ամփոփ տվյալներ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի բոլոր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ՝ ի նպաստ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվող բարեփոխումների:

Չնայած 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողությունների և COVID-19 համավարակի պատճառով ստեղծված արտակարգ պայմաններին, հնարավոր եղավ կազմակերպել և իրագործել բուհի 75-ամյա հոբելյանի կապակցությամբ նախատեսված միջոցառումներից մի քանիսը:

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1.
# ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

## 1.1 ՀՖԿՍՊԻ մասնագիտությունները, մասնագիտության կրթական ծրագրերը և ուսանողական համակազմը

«Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ» սահմանված է «տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթությունից»:

Բուհի երկու ֆակուլտետում իրականացվում է 12 կրթական ծրագիր, որոնցից 4-ը՝ բակալավրի, 8-ը՝ մագիստրոսի, 1-ը՝ ասպիրանտուրայում:

***Աղյուսակ 1. Բակալավրի կրթական ծրագրերը***

| | Մասնագիտությունը և դասիչը | Կրթական ծրագիրը և դասիչը | Որակավորումը |
|---|---|---|---|
| 1. | Մասնագիտական մանկավարժություն 011401.00.6 | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.6 | Մանկավարժության բակալավր առկա/հեռակա |
| | | Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.6 | |
| 2. | Սպորտ 101401.00.6 | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա 101401.02.6 | Սպորտի բակալավր առկա/հեռակա |
| 3. | Լրագրություն 032101.00.6 | Լրագրություն՝ 032101.01.6 | Լրագրության բակալավր առկա/հեռակա |

***Աղյուսակ 2. Մագիստրոսի կրթական ծրագրերը***

| | **Մասնագիտությունը և դասիչը** | **Կրթական ծրագիրը և դասիչը** | **Որակավորումը** |
|---|---|---|---|
| 1. | Մասնագիտական մանկավարժություն 011401.00.7 | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.7 | Մանկավարժության մագիստրոս առկա/հեռակա |
| | | Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.7 | |
| 2. | Սպորտ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա 101401.02.7 | Սպորտի մագիստրոս առկա/հեռակա |
| | | Ադապտիվ սպորտ 101401.03.7 | |
| 3. | Լրագրություն 032101.00.7 | Լրագրություն՝ 032101.01.7 | Լրագրության մագիստրոս առկա/հեռակա |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Հոգեբանություն 031301.00.7 | Հոգեբանություն 031301.01.7 | Հոգեբանության մագիստրոս առկա |
| 5. | Կառավարում 041301.00.7 | Մենեջմենթ 041301.01.7 | Կառավարման մագիստրոս առկա |
| 6. | Շուկայագիտություն (մարքեթինգ) 041401.00.7 | Մարկետինգ 041401.01.07 | Կառավարման մագիստրոս Առկա |
| ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ | | | |
| 1 | Դասավանդման և դաստիարակություն մեթոդիկա | Ֆիզիկական կուլտուրա ԺԳ.00.02 | Առկա/հեռակա |

2019-2020 ուսումնական տարում բուհում սովորել է 2560 ուսանող, որից՝ 1058 առկա, 1386–ը՝ հեռակա, այդ թվում՝ 60 օտարերկրացի, որից՝ 32 առկա, 24 հեռակա: Մագիստրատուրայում սովորել է 116 ուսանող: Ցածր առաջադիմության պատճառով բուհից հեռացվել է 30 ուսանող, ազգային բանակ է զորակոչվել 150 ուսանող, իսկ իր դիմումի համաձայն՝ ուսումնառությունը բուհում դադարեցրել է 22 սովորող: Նույն ուսումնական տարում կրթական իրավունքները վերականգնել է 327 ուսանող:

2019-2020 ուսումնական տարում ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2015 թ. հուլիսի 8-ի Ն-752 որոշմամբ՝ անցկացվել է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների հարցազրույց, որի արդյունքում հրամանագրվել են 18 ուսանող (հր. 733, 22.06.2020թ.):









2018-2019 ուսումնական տարվա համեմատությամբ բակալավրի ուսանողների թիվը աճել է շուրջ 20%–ով, որն էլ հանդիսանում է ուսումնական գործընթացների բարեփոխումների ցուցանիշներից մեկը:

***Աղյուսակ 3.***
***Հեռացված և վերականգնված ուսանողների թիվը***

| Հ/Հ | 2019-2020 ուսումնական տարի | | |
|---|---|---|---|
| | | **Քանակը** | **Ուսանողության քանակի %** |
| 1 | Հեռացված ուսանողներ | 202 | 8,3 |
| 2 | Վերականգնված ուսանողներ | 327 | 13,4 |

## 1.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու բարելավմանն ուղղված աշխատանքներ:

Անհրաժեշտ ժամկետներում ՀՖԿՍՊԻ ամբիոնները, դեկանատները և ուսումնական գործունեությունը համակարգող կառուցվածքային ստորաբաժանումները համատեղ պատրաստել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 2019-2020 ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցերը և դասացուցակները:

Ուսումնական գործընթացին առնչվող փաստաթղթերը, ձևաչափերը, ուսումնական մատյանները, քննական տեղեկագրերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ուսանողների հետ աշխատանքը բավականին ծավալուն, բայց միաժամանակ արդյունավետ է իրականացվել:

Սահմանված ժամկետներում կազմակերպվել և վերահսկվել է նաև ՀՖԿՍՊԻ առաջին կուրս ընդունված ուսանողների հրամանագրումը, կատարվել է կուրսից կուրս տեղափոխման, ուսանողների փոխատեղման հրամանագրումը: Սահուն կերպով կազմակերպվել են նաև ուսանողների վերականգնման, հեռացման և ներքին շարժունության գործընթացներ:

Ուսումնագիտական բաժնի կողմից տրվել են թվով՝ 178 հրամաններ ուսանողների հեռացման, վերականգման, ներբուհական ակադեմիական շարժունության, փոխատեղման վերաբերյալ:

Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների ու փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման և պլանավորման արդյունավետության նպատակով մշակվել են մի շարք կարգեր և ընթացակարգեր՝ մասնավորապես ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգը, առցանց եղանակով ավարտական աշխատանքների և մագիստրոսական պաշտպանության ընթացակարգը, պատրաստման ընթացքում են նորերը:

Միջոցներ են ձեռնարկվել ուսումնական գործընթացին վերաբերող գործառույթները կատարելագործելու համար, օրինակ՝ ընթացիկ հրամանների, ինչպես նաև քննաշրջանից ու լուծարքային շրջանից հետո առարկայական պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփման գործընթացների ուղղությամբ:

Հաշվապահական հաշվառման բաժնի հետ համատեղ ակտիվորեն և բավականին արդյունավետ կերպով հավաքագրվել է ուսանողների՝ նախորդ տարիներից կուտակված վարձավճարների պարտքերի շուրջ 30%–ը: Ֆակուլտետի պատասխանատուների կողմից ուսանողների պահանջի հիման վրա տրամադրվել են ուսանողի կարգավիճակի վերաբերյալ 546 տեղեկանք:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դյուրացվել է ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տարածման և ընդունման

գործընթացը: Ինստիտուտի կայքի և ֆեյսբուքյան էջում տարածել է ուսումնական դասացուցակների, քննատախտակների, Իսնտիտուտի կողմից ուսանողներին մասնակի փոխատուցման իրավունքի վերաբերյալ տեղեկատվություններ:

Հաշվետու տարում ուսումնագիտական բաժինը, ֆակուլտետները, ամբիոնները, որակի ապահովման բաժինը նպաստել են հաճախումների ու առաջադիմության հարցերը բավարար հիմքերի վրա դնելու համար. ուսանողների հետ անցկացվել են խորհրդակցություններ, զրույցներ, կոնսուլտացիաներ:

Ֆակուլտետների պատասխանատուների կողմից իրականացվել են դասապրոցեսների անցկացման և ուսանողների հաճախելիության ստուգայցեր հոկտեմբեր-փետրվար ամիսներին:

Կազմակերպվել է 2019-2020 ուսումնական տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների վերլուծություն, վեր են հանվել առկա խնդիրները, տրվել են համապատասխան հանձնարարականներ ուսանողների առաջադիմության, ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Երկու կիսամյակների կտրվածքով՝ գարնանային և աշնանային, հաճախելիությունը համապատասխանաբար կազմել է՝ աշնանային առկա՝ 71,8%, հեռակա՝ 65.5%, իսկ գարնանային կիսամյակում՝ պայմանավորված COVID-19 հավարակի տարածումը կանխելու նպատակով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ, Ինստիտուտում իրականացվել է հեռավար ուսուցում, որին ուսանողների հաճախելիությունը կազմել է՝ 57.6%






## 1.3 Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացների կազմակերպում

2019-2020 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ–ի բոլոր քննաշրջաններն անցկացվել են նախապես հաստատված ժամանակացույցի և այդ գործընթացը կարգավորող իրավական ակտերի համաձայն:

Ինստիտուտում իրականացվող կրթության որակի բարելավմանն նպատակով ներդրվել է ծածկագրված քննությունների նոր ընթացակարգ, որը հնարավորություն ընձեռել անկողմնակալ և օբյեկտիվ գնահատել ուսանողի ստացած գիտելիքների մակարդակը և թափանցիկ դարձնել քննական գործընթացը: Միջանկյալ քննությունները իրականացվել են քննական թեստային հարցաշարերի միջոցով: Քննական պրոցեսի ընթացքում պատշաճ հսկողական գործառույթ իրականացվելու համար հրավիրվել են քննական պրոցեսի անկախ պատասխանատուներ՝ թվով 15 քննական հսկիչներ:

Հսկիչների կողմից կազմվել են արձանագրություններ, համաձայն որոնց թվով 25 ուսանողներ կատարել են քննական խախտումներ, որից հետո ժամանակավոր հանձնաժողովը քննարկելով արձանագրությունները թվով 23 ուսանողներ ստացել անբավարար, իսկ 2 ուսանող՝ գրավոր նկատողություն:

Նշենք, որ նոր քննարկարգը ներդրվել է 1–ին կուրսի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացում և ինչպես ցույց են տալիս Ինստիտուտի Որակի ապահովման բաժնի կողմից իրականացված ուսանողական հարցումներիի արդյունքները, ուսանողները այս համակարգը բավականին արդյունավետ են գնահատում օբյեկտիվ և անաչառ գնահատման տեսանկյունից:




**Գծապատկեր 6.**

***Գնահատեք ծածկագրված քննությունների անցկացման համակարգի արդյունավետությունը***

Ուսանողների առաջադիմությունը ՖԴԱՏ ֆակուլտետում կազմել է առկա ուսուցման համակարգում համապատասխանաբար՝ գերազանց 24%, լավ՝ 26%, բավարար՝ 33%, անբավարար՝ 17%:




Ուսանողների առաջադիմությունը ՍՄԿ ֆակուլտետում կազմել է առկա ուսուցման համակարգում համապատասխանաբար՝ գերազանց 16,7%, լավ 25%, բավարար 28,2%, անբավարար՝ 29,9 %: Հեռակա ուսուցման համակարգում՝ գերազանց 7.5%, լավ 32,7 %, բավարար՝ 59.5%, անբավարար՝ 0.3%:










Հաշվետու ուսումնական տարում բուհում օրախնդիր դարձել ուսանողների ստուգման և գնահատման գործընթացի բարեփոխումը՝ ներառյալ ուսումնառության

արդյունքների օբյեկտիվ գնահատման չափանիշների և բողոքարկման համակարգի մշակումը, թափանցիկության ապահովումը:2019 թվականին սկսվել են աշխատանքներ այդ ուղղությամբ: Վերամշակման ընթացքում է ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդաբանությունը և կարգը՝ ներառյալ գրավոր և ինքնուրույն աշխատանքների գնահատման մեթոդաբանությունը՝ ընդլայնելով ստեղծագործական հետազոտական աշխատանքների ծավալը: Մշակվել և փորձարկման ընթացքում են ուսանողների մասնագիտական պատրաստվածության՝ հմտությունների և կոմպետենցիաների գնահատման բնութագրիչները, որոնք կապակցված են ուսումնառության վերջնարդյունքների հետ:

## 1.4 Հակակոռուպցիոն միջոցառումների իրականացումը ՀՖԿՍՊԻ 2019-2020 ուսումնական տարվա գործունեության համատեքստում

Հաշվետու ժամանակահատվածում հակակոռուպցիոն քաղաքականության ուժեղացումը բուհի գործունեության առանցքային ուղղություններից էր, որի նպատակն է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնել ՀՖԿՍՊԻ–ի նկատմամբ հանրային վստահության աստիճանը:

ՀՖԿՍՊԻ զարգացման ռազմավարության մի շարք դրույթներ, որոնք մասնավորապես վերաբերում են կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայնմանը, միաժամանակ ունեն հակակոռուպցիոն կարևոր ազդեցություն:

2019-2020 ուստարվա ընթացքում կրթության համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և ակադեմիական անազնիվ վարքագծերի դիսևորումների կանխարգելման նպատակով գործադրվել են մասնավորապես հետևյալ քայլերն ու միջոցառումները՝

- ✓ ՀՖԿՍՊԻ աշխատակիցների համալրումը իրականացվել է բաց մրցութային կարգով,
- ✓ ընդունելության քննությունների անցկացվել են նոր ու առավել վերահսկելի ձևաչափով՝ գրավոր քննությունները՝ ծածկագրված եղանակով, իսկ գործնական քննությունների ընթացքը տեսաձայնագրվել է ու արխիվացվել,
- ✓ սահմանվել է միջանկյալ և ամփոփիչ քննությունների նոր կարգ, ըստ որի քննություններն անցնում են ծածկագրված՝ ապահովելով միջնորդությունների և դասախոսների հետ համաձայնության գալու անհնարինությունը,
- ✓ կատարելագործվել են ներքին իրավական ակտերը, կառավարման ու վերահսկման մեխանիզմները՝ ապահովելով տարբեր գործընթացների

առավել կանոնակարգված, թափանցիկ և հրապարակային ընթացքն ու հնարավորինս բացառելով գործառութային շահերի բախումը:

Հաշվետու տարում կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացման համար քայլեր են ձեռնարկվել կորպորատիվ էթիկայի և աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող փաստաթղթերի մշակման, գրագողության կանխարգելիչ մեխանիզմների վերանայման, հաշվետվողականության համակարգում հրապարակային և թափանցիկ գործելակերպ ներմուծելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվում նաև ուսանողների փոխատեղման գործընթացը ևս առավել թափանցիկ և համակարգված դարձնելու նպատակով:

ՀՖԿՍՊԻ–ում 2019-2020թթ իրականացվել է ներբուհական տարբեր գործընթացների մշտադիտարկում և կոռուպցիոն ռիսկերին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսանողների հետ հետադարձ կապի ապահովում՝ ուսանողական հարցումների միջոցով:

2019-2020թթ ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացվել են ՀՖԿՍՊԻ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (բավարարվածության գնահատում): Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների շրջանակում ուսանողների մի մասը կարծում է ՝ բուհում ձևավորվում է անհանդուրժողականության մթնոլորտ կոռուպցիոն որոշակի երևույթների նկատմամբ:

ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի կողմից ԳԽ նիստերում ներկայացվել են իրականացված հարցումների արդյունքների վերլուծությամբ վերհանված խնդիրները, քննարկվել դրանց արձագանքման և բարելավումների ծրագրերի պլանավորման հարցերը:

Հակակոռուպցիոն կրթության համատեքստում ՀՖԿՍՊԻ–ի երկու ֆակուլտետների բակալավրի վերամշակված բոլոր կրթական ծրագրերի 2-րդ կուրսի ընդհանուր կրթամասում ներդրվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» պարտադիր դասընթացը: Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների իրավական-օրենսդրական կարգավորման հիմունքներին, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերին, ինչպես նաև ուսանողների շրջանում ձևավորել հասարարական բարձր գիտակցում կոռուպցիայի դեմ պայքարում իր ունեցած դերակատարության ընկալումների վերբերյալ:

Ներկայումս ՀՖԿՍՊԻ–ը իրականացնում է աշխատանքներ էթիկայի կանոնակարգի լրամշական, շահերի բախման երևույթի չեզոքացման և գրագողության դեմ պայքարի մեխանիզմների շարունակական բարելավման և

պարբերաբար գնահատման ոլորտում, քանի որ դեռևս արդյունավետ չեն գործում առկա կանոնակարգերը:

### 1.5 Կրթական ծրագրի շարունակական բարելավում, մասնագիտական կրթության որակի բարձրացում, որակավորումների շնորհման արժանահավատության ապահովում

2019-2020 ուսումնական տարում կրթական գործընթացը միտված է եղել կրթական վերափոխումների իրականացման և որակյալ բուհական կրթական համակարգի նոր նպատակադրումների սահմանմանն ու իրագործմանը: Ծավալուն աշխատանք է կատարվել ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, կրթության որակի ապահովման, այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:




**Գծապատկեր 11. ՀՖԿՍՊԻ կրթության որակի կառավարման համակարգը**

2019-2020թ. թ., ընդհանուր առմամբ, Ինստիտուտում մասնագիտության կրթական ծրագրերի վերանայումը դարձել էր առօրյա խնդիր: Կրթական ծրագրերի պատասխանատու ֆակուլտետների և ԿԾ վերանայման աշխատախմբերի գործուն և բավականին արդյունավետ համագործակցությամբ գործարկվել են կրթական ծրագրերի շարունակական բարելավման մեխանիզմները՝ մասնավորապես օգտակար են եղել արտաքին փորձագիտական գնահատումներն ու ուսանողների

հետ հարցումների վերլուծությունների և ֆոկուս խմբային հետազոտությունների արդյունքում ՄԿԾ բարելավման գործիքակազմը:

ՀՖԿՍՊԻ–ի ՈԱԲ-ի կատարած նախնական մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ նախորդ տարիներին մշակվել են կրթական ծրագրի փաթեթի որոշակի տարրեր ու բաղադրիչներ, հստակ չէր նաև, թե ով է բուհում եղել պատասխանատու ՄԿԾ մշակման աշխատանքների համար:

Այսօրինակ խնդիրներից մեկն էր Ինստիտուտում գործող բոլոր կրթական ծրագրերի ոչ ամբողջական ու անորոշ կարգավիճակը:

Ինստիտուտում գործող կրթական ծրագրերի բարելավման հարցը պաշտոնավարման առաջին իսկ օրից գտնվել է ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանի ուշադրության վերահսկողության ներքո:

Դ. Խիթարյանի հրամանով (29 հունվարի 2020 թ., № 53/1-L) ստեղծվել են ՄԿԾ մշակման աշխատանքային խմբեր, որոնք ամբողջացրել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՖԿՍՊԻ-ն ավարտին է հասցրել նաև «Սպորտի տուրիզմ» մասնագիտությամբ նոր դասիչով լիցենզավորելու գործընթացը:

Կրթական ծրագրերի պատասխանատու ֆակուլտետների և ԿԾ վերանայման աշխատախմբերի գործուն և բավականին արդյունավետ համագործակցությամբ գործարկվել են կրթական ծրագրերի շարունակական բարելավման մեխանիզմները՝ մասնավորապես օգտակար են եղել արտաքին փորձագիտական գնահատումներն ու ուսանողների հետ հարցումների վերլուծությունների և ֆոկուս խմբային հետազոտությունների արդյունքում ՄԿԾ բարելավման գործիքակազմը:

Արտաքին շահակիցների մասնակցությունը ապահովելու նպատակով մշակվել և հաստատվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգը»[1], որի նպատակն է գնահատել ծրագրի իրականացման որակը, պատասխանատու ֆակուլտետների/ամբիոնների կարողությունը՝ ՄԿԾ–ն իրականացնելու համար սահմանված ծրագրային կողմնորոշիչներին, կրթության ներքին և արտաքին որակի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգը սահմանում է մասնագիտության կրթական ծրագրի արտաքին շահակիցների, անկախ փորձագետների ներգրավման հստակ մեխանիզմ, որը փորձագիտական հանձնախմբին հնարավորություն է տալիս ուսումնասիրել և գնահատել ՄԿԾ–ի իրականացման արդյունավետությունը ինչպես փաստաթղթային եղանակով, այնպես էլ Ինստիտուտ այցի միջոցով: Այցի նպատակն է հանդիպումներ

[1] http://sportedu.am/about/doc/regulation/rule_MKTS.pdf

ունենալ և տեղում ծանոթանալ ՄԿԾ–ի կիրառմանը, ինչպես ամբողջ բուհի համատեքստում, այնպես էլ՝ ուսանողների, դասախոսների տեսանկյունից:

Ընթացակարգով սահմանված ժամանակահատվածում անցկացվել ու ամփոփել են արտաքին փորձագիտական մշտադիտարկումները, ընդհանրացվել են փորձագիտական կարծիքների հիման վրա արված գնահատումները, որոնք նպաստել են կրթական ծրագրի վերափոխումների նպատակայնությանը:

Արտաքին գնահատման են տրամադրվել բակալավրի երեք մասնագիտությունների կրթական ծրագրերը և մագիստրատուրայի չորս մասնագիտությունների կրթական ծրագրերը:

Արտաքին գնահատող-փորձագետների հետ հանդիպում-քննարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտաքին շահակիցների դիտարկումները հիմնականում վերաբերում են բուհական կրթությունը աշխատաշուկայի այժմյան պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության կարևորությանը. գործատուների առաջարկները հաշվի են առնվել ուսումնական պլաններում՝ ավելացնելով և զարգացնելով գործնական առաջադրանքների հատվածը:

Մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման, մշտադիտարկման և վերամշակման աշխատանքները մեկնարկել են 2019 թ. սեպտեմբեր ամսից, որի գործածության արդյունքում ուսումնառության գործընթացի որակի բարելավման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Ստեղծվել են աշխատանքային խմբեր, կազմվել է խմբի գործունեության աշխատանքային պլանը:
2. Մշակվել է կրթական ծրագրերի կառուցվածքի կանոնակարգը, մշտադիտարկման ընթացակարգը, հարցաշարը:
3. Մասնագիտական կրթական ծրագրերը գնահատվել են արտաքին և ներքին շահակիցների կողմից, որոնց հիման վրա վերափոխվել են կրթական ծրագրերը:
4. Կրթական ծրագրերի վերափոխման ընթացքում իրականացվել է ծրագրերի վերամշակման աշխատանքներին մասնակից պրոֆեսորադասախոսական կազմի համապատասխան վերապատրաստումներ:
5. Կրթական ծրագրերի վերջնարդյունքները քննարկվել են գործատուների և ակադեմիական կազմակերպությունների համապատասխան մասնագետների հետ՝ կլոր–սեղան–քննարկումների, գրավոր առաջարկների ձևաչափով:
6. Գնահատվել է նաև ներքին շահակիցների բավարարվածության աստիճանը:

Հաջորդական և համակողմանի այս բոլոր քայլերի օժանդակությամբ բուհում գործող կրթական ծրագրերի մեծամասնությունը ենթարկվել է բովանդակային փոփոխությունների: Հարկ ենք համարում նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում

սկսվել են բակալավրի և մագիստրատուրայի առարկայական նկարագրերի գնահատումները, վերանայումները և վերափոխումները, որոնք կրում են շարունակական բնույթ և մինչև 2020-2021 ուս տարի պետք է ստանան ավարտուն տեսք:

«Փրկարարական գործ» մասնագիտությունը մի մասն է կազմում մասնագիտական մանկավարժություն կրթական ծրագրի: Սակայն կրթական ծրագրում, ինչպես նաև դիպլոմներում մանկավարժության որակավորման "փրկարարական գործ" մասնագիտությունը ավելացնելու թույլտվությունը հնարավորություն ընձեռեց փոփոխություններ կատարել կրթական ծրագրում: Արդեն իսկ 2020-2021 ուստարում փրկարար գործ մասնագիտությամբ ուսանոնղները անցնում են նոր ծրագրով: Մասնավորապես, ծրագրում ներառվել են այնպիսի դասընթացներ, ինչպիսիք են՝ արտակարգ իրավիճակների հոգեբանություն, փրկարարական լող, աշխատանքի ֆիզիոլոգիա, տարիքային ֆիզիոլոգիա, տարիքային հոգեբանություն առարկաները: Բացի այդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ–ն որդեգրեց հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառականության սկզբունքը, անհրաժեշտություն առաջացավ մանկավարժական որակավորում շնորհող կրթական ծրագրում ավելացնել հատուկ մանկավարժություն և հատուկ հոգեբանություն առարկաները, որոնց տիրապետումը կապահովի ուսուցիչների առավել արդյունավետ աշխատանքը տարբեր շեղումներ ունեցող երեխաների հետ:

Ամբիոնը նախաձեռնել է նաև «Սպորտային տուրիզմ» մագիստրոսական ծրագրի իրականացումը 2021-2022 ուս.տարվանից: Կրթական ծրագրի իրականացման անհրաժեշտության հիմնավորումը և այժմեականությունը ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն, որն արժանացել է դրական գնահատանքի: Այժմ տրամաբանական ավարտին մոտենում է ծրագրի կազմումը և հաստատումը:

Անհրաժեշտ է նշել, որ կրթական ծրագրերում մեծ տեղ է տրվել հետազոտական և գործնական բաղադրիչին: Ընդ որում երկու բաղադրիչների արտահայտվածությունը կրթական ծրագրերում պայմանավորված է ինչպես գիտահետազոտական և պրակտիկ աշխատանքների իրականացմամբ, այնպես էլ տարբեր առարկաների շրջանակներում ուսումնառության և դասավանդման համապատասխան մեթոդների կիրառմամբ: Կրթական ծրագրերի շրջանակներում գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով դասավանդման և ուսումնառության գործընթացներում ներառվել է դուալ կրթության տարրեր:

Բուհում գործող երկու մագիստրոսական ծրագրեր ամբողջությամբ վերաձևավորվել են և գտնվում են իրագործման պիլոտային փուլում: Այն է՝ կրթական ծրագրում ներառված դասընթացները, դրանց անցկացման և գնահատման ձևաչափը ամբողջությամբ փոխվել են, անցում կատարելով նախագծային քննությունների տարբերակին:

### 1.6 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության նախապատրաստում

2019-2020 ուս. տարում վերանայվել են «Լրագրություն» և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» մասնագիտություններով ընդունելության քննությունների ծրագրերը և հարցաշարերը: Վերանայվել են նաև մասնագիտական մանկավարժության մասնագիտության մարզաձևերի, ինչպես նաև փրկարարական գործ մասնագետների նորմատիվները և համապատասխանեցվել: Արտաքին և ներքին փորձագիտության արդյունքների հիման վրա մշակվել և հաստատվել են ընդունելության նոր հարցաշարեր և նորմատիվներ:

Փոխվել են նաև ընդունելության քննությունների անցկացման ձևաչափը՝ այն անցել է փակ գաղտնի համակարգով՝ ապահովելու համար ընդունելությաան օբյեկտիվությունը:

2019-2020 ուսումնական տարում ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2015 թ. հուլիսի 8-ի Ն-752 որոշմամբ՝ անցկացվել է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների հարցազրույց, որի արդյունքում հրամանագրվել են 15 ուսանող (հր. 733, 22.06.2020թ.):

**Նախապատրաստական դասընթացների իրականացման ծրագիր**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կրթական բարեփոխման ռազմավարության գերակա խնդիրն է կրթության որակի բարելավումը, ինչի ուղղությամբ իրականացվում են մի շարք միջոցառումներ և ծրագրեր, որոնց թվում է լրացուցիչ կրթության շրջանակներում նախապատրաստական ծրագրի իրագործումը:

Լրացուցիչ կրթական ծրագիրը իրենից ներկայացնում է դասընթացներ, որոնք ուղղված են հանրակրթական հաստատությունների ավարտական դասարաններում սովորողերի, շրջանավարտների դպրոցում ձեռք բերած գիտելիքի ամրապնդմանը և համակարգմանը, ինչպես նաև առարկայական ծրագրերի յուրացմանը, գիտելիքի ձեռքբերմանը:

Լրացուցիչ կրթական ծրագրի նպատակն է կազմակերպել նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար ուղղորդված և համակարգված գիտելիքի փոխանցման և ամրապնդման ճանապարհով:

Ծրագրի առանձնահատկությունն է՝ մատչելիություն, խորքային, համակարգված գիտելիք, անհատական մոտեցում, բարձր որակավորում և մեծ փորձ ունեցող դասախոսների ընտրություն:

Թիրախային խումբ՝ ՀՀ դիմորդ, Արտասահմանցի դիմորդ, ՀՀ միջին դպրոցի շրջանավարտ

Նախապատրաստական ծրագիրը ներառում է տարբեր կրթական ծրագրերով ընդունելության քննությունների առարկաները՝ կենսաբանություն, հայոց լեզու, ԸՖՊ, ՖԿ և սպորտի պատմություն:

Նախապատրաստական դասընթացների իրականացումը լուծում է բուհի առջև ծառացած մի քանի խնդիրներ՝ ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացում, գիտակցված մասնագիտական ընտրություն կատարած դիմորդների քանակի ավելացումմ, բուհում ֆինանսական հոսքերի ավելացում: Ծրագիրը ներկայացվել է ռեկտորատում և արժանացել հավանության, որին հաջորդել է դասընթացների իրականացման մեկնարկը ոչ միայն տեղական, նաև օտարերկրյա ուսանողների համար:

**«ՓՈՔՐԻԿ ՕԼԻՄՊԻԿ» ամառային դպրոց**

Ամառային արձակուրդները հետաքրքրիր ժամանցի և անհոգ հանգստի ժամանակն է: Մարդու բնականոն գործունեության համար կարևոր է հանգստի և աշխատանքի ռեժիմի պահպանումը, կարճատև և երկարատև հանգտի կազմակերպումը: Հատկապես այն կարևորվում է անձի զարգացման վաղ փուլերում, երբ ձևավորվում են բնավորության գծերը և կանխորոշում մարդու կենսակերպը: Ամառային դպրոցը արդյունավետ հանգստի կազմակերպման լավագույն ձևերից է, երբ օգտակարը համընկնում է հաճելիի հետ: Ամառային դպրոցների աշխատանքները էապես տարբերվում են իրենց գործառույթներով և կազմակերպչական առանձնահատկություններով: Նախ և առաջ ամառային դպրոցներում բացակայում է դասերի անցկացման պարտադիր բաղադրիչը: Այն միտված է ընդհանուր զարգացման, ֆիզիկական և հոգեբանական զարգացմանը, հասակակիցների և մեծահասկաների հետ արդյունավետ շփմանը: Ամառային դպրոցը առաջարկում է ամենաօգտակար կրթական ծրագրերը, որոնք նպաստում են երեխաների համակարգային և համապարփակ զարգացմանը:

Մեր կողմից առաջարկվող ամառային դպրոցի քաղաքականությունը ձևավորվել է օլիմպիզմի գաղափարախոսության շրջանակներում և «ներդաշնակ զարգացում» կարգախոսի ներքո: Ամառային դպրոցի յուրահատկությունը կայանում է որդեգրած տեսլականի մեջ՝ այն է օլիմպիզմի գաղափարախոսությունը որպես երեխաների ներդաշնակ զարգացման գրավական. իր գործառնության տարբեր մակարդակներում ՝ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինբտելեկտուալ:

Ամառային դպրոցի ծրագրի նպատակն է ապահովել երեխաների դրական, կենսուրախ հանգիստը, համադրելով այն անձի զարգացման առանցքային հատկությունների ձևավորման հետ. այն է պատասխանատվություն, ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողությունների զարգացում, կյանքի ակտիվ պոզիցիայի դաստիարակում, ստեղծագործական պոտենցիալի զարգացում, առողջ ապրելակերպի դաստիարակում, միջանձնային հարաբերությունների կառուցում:

Ծրագրի իրականացումը նախատեսված էր 01.06.2020թ.–ին, սակայն հաշվի առնելով թագավարակով պայմանավորված իրավիճակը և սահմանափակումները, մեկնարկը կտրվի 01.06.2021 թ–ին:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդիական հետազոտություններ և նորարարություն» ռազմավարական ծրագրով սահմանված է «ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը»:

Հաշվետու ժամանակահատվածում բուհում իրականացվել է հետբուհական կրթություն «Մանկավարժություն» մասնագիտությամբ: Վերանայվել են և ներկայացվել հաստատման ուսումնական պլանները, դասընթացների անցկացման ձևաչափերը և ժամկետները: Հատկանշական է նաև, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն հայտ է ներկայացավ կենսաբանական և հոգեբանական գիտությունների գծով հետբուհական կրթություն իրականացնելու համար, որն արժանացել է դրական պատասխանի: Այսինքն, այսուհետ բուհում կարող ենք իրականացնել հետբուհական կրթություն կենսաբանական, հոգեբանական և մանկավարժական գիտությունների գծով:

Գիտության զարգացման ռազմավարության շրջանակներում գիտահետազոտական աշխատանքներում դասավանդողների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով ռեկտորի հրամանով 2020թ.-ի օգոստոսի 31-ին հաստատվել է ՊԴԱ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի տարբերակված վճարաչափեր սահմանելու մասին հրամանը:

Ինստիտուտի դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով բուհում իրականացվող բարեփոխումների համատեքստում Ինստիտուտում հաստատվել է վճարման մի համակարգ, որով սահմանված են գիտահետազոտական գործունեության խրախուսման նախատեսվում է հավելավճարներ սահմանել ակադեմիական հաջողությունների և ՀՖԿՍՊԻ գիտական վարկանիշի առաջխաղացման համար հավելավճարի:

Հետազոտական ոլորտում բուհի նախաձեռնած բարեփոխումների առաջնահերթություններից է բուհում ընթացող հետազոտական աշխատանքների իրականցման կոնկրետ թիրախավորումն ու հստակ նպատակադրումների սահմանումը, քանի որ 2017-2021թ.թ.ՌԾ-ում նախանշված նպատակները որոշ դեպքերում անորոշ են, առանձնացված խնդիրները չեն համապատասխանում հետազոտության ոլորտի զարգացման նպատակներին, իսկ Խնդիր **1.3-ը** համադրելի չէ բուհի ուղղակի շահակիցների կարիքների ուսումնասիրության և դրանց արձագանքելու մոտեցումների հետ:

2020 թ.-ի հունիսի 29-ի թիվ 2 Հոգաբարձուների խորհրդի որոշմամաբ հաստատված ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքում ներդրվել է Գիտահամակարգող խորհուրդը, որի գործունեությունը միտված է երաշխավորելու բուհում իրականացվող կարճաժամկետ և միջնաժամկետ հետազոտական

աշխատանքների որակի ապահովումն ու վերահսկողությունը: (ՀՖԿՍՊԻ գիտահամակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կանոնակարգ՝ հաստատված 2020 թվականի օգոստոսի 31-ի ԳԽ նիստին):

Վերանայվել և խստացվել է բուհի ամենամյա գիտաժողովներին ու պարբերականներին ներկայացված նյութերի ուսումնասիրման, խմբագրական աշխատանքների կազմակերպման և և հոդվածներին ներկայացվող պահանջները: Վերանվանվել է ժողովածուն, վերամշակվել է ամսագրի գեղակառույցը:

Գրախոսության փուլ է անցել ընդհանուր թվով 47, որից տպագրության է ներկայացվել 43 հոդված 2020 թ.-ի հունիսի 29-ի թիվ 2 Հոգաբարձուների խորհրդի որոշմամաբ հաստատված ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքում ներդրվել է Գիտահամակարգող խորհուրդը, որի գործունեությունը միտված է երաշխավորելու բուհում իրականացվող կարճաժամկետ և միջնաժամկետ հետազոտական աշխատանքների որակի ապահովումն ու վերահսկողությունը: (ՀՖԿՍՊԻ գիտահամակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կանոնակարգ՝ հաստատված 2020 թվականի օգոստոսի 31-ի ԳԽ նիստին): մեջբերումներ կանոնակարգից

Վերանայվել և խստացվել է բուհի ամենամյա գիտաժողովներին ու պարբերականներին ներկայացված նյութերի ուսումնասիրման, խմբագրական աշխատանքների կազմակերպման և և հոդվածներին ներկայացվող պահանջները:

Վերանվանվել է ժողովածուն, վերամշակվել է ամսագրի գեղակառույցը: Գրախոսության փուլ է անցել ընդհանուր թվով 47, որից տպագրության է ներկայացվել 43 հոդված:

2019-2020 թ.թ. զգալի աշխատանքներ են տարվել դրամաշնորհային հետազոտական ծրագրերում բուհի ներգրավման ուղղությամբ, որոնք հնարավորություն են տալիս ինչպես խորացնելու, այնպես էլ ընդլայնելու հետազոտությունների դաշտը, փորձարկելու նոր թեմաների զարգացման հնարավորությունները, մասնավորապես՝ երիտասարդ դասախոսների ներգրավման ճանապարհով:

2019 թ-ին բուհում աճել է ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում բուհի դասախոսների հրատարակությունների թիվը՝ 8, մինչդեռ 2016-2018թ.թ-ի արտասահմանյան գրախոսվող մասնագիտական պարբերականներում հրատարկման է ներկայացվել 2 հոդված:

Ինստիտուտը իր ձեռքբերումներից է համարում 2020 թ.-ին ԺԳ.002 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մասնագիտական խորհրդի ստեղծումը բուհում՝ ԲՈԿ–ի կողմից բուհին արտոնելով իրականացնել ատենախոսությունների թեմաների հաստատում, կազմակակերպել գիտական աստիճանաշնորհման պաշտպանություններ: Խորհրդի կազմում ընդգրկված են մասնագիտական ոլորտում գիտական մեծ ավանդ ունեցող

շուրջ մեկ տասնյակ գիտնականներ ՀՀ ԲՈՀ-ի որոշում, Գիտխորհրդի արձանագրություն:

ՀՖԿՍՊԻ–ն հրատարակում է երկու գիտական հանդեսների՝ «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» (2015թ.) և «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» (2020թ.) շարքեր, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույն գիտական հանդես է:

2019թ-ին Ինստիտուտի Որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցումների միջոցով վեր է հանվել գիտահետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավվածության ցածր մակարդակը, որի պատճառներից են մատնանշվել հետազոտական տիրույթի զարգացմանն ուղղված մոտիվացիոն թույլ մեխանիզմերը: Գիտական հետազոտություններում երիտասարդ գիտնականների ներգրավվման, գերակա ոլորտներում հետազոտությունների աշխուժացման նպատակով 2020թ.–ին բուհում ներդրվել է ՊԴ կազմի աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման համակարգ, որում առանձնացված է գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշը,խրախուսվել ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները:

Ներդրված համակարգի ազդեցությունը դիտարկելու համար բուհում ավելացել է միջազգային շտեմարաններում (Web of science, Scopus) ինդեքսավորվող ամսագրերում հրապարակումները թիվ (2019-2020 թթ.–ին հրատարակվել է 8 գիտական հոդված

2020թ.–ին վերանայվել է համաամբիոնային և միջառարկայական հետազոտություններ շրջանակը՝ ուսումնասիրություններ իրականացնելով ՀՀ հավաքական թիմերում, մարզադպրոցներում, հանրակրթական հաստատություններով: Յուրաքանչյուր ամբիոնում առկա է գիտական գծով ներկայացուցիչ, ով նպաստում է ուսանողների և ստորաբաժանման հետազոտական աշխատանքների կազմակերպման:

Ինստիտուտի ուսումնառողների գիտահետազոտական գործունեությունը խրախուսելու և անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվում է հետբուհական կրթություն, որին ներգրավված են ոչ միայն ՀՖԿՍՊի–ի, այլև տեղական և արտերկրի այլ ուսումնական հաստատությունների շրջանավարտներ:

2019-2020 թ.թ. նշանակալի քայլեր են ձեռնարկվել գիտահետազոտական կենտրոնների հայտարարած գիտահետազոտական ծրագրերին մասնակցելու ուղղությամբ. նկատելիորեն աճել է բուհի ներգրավվածությունը ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթներին: Ներկայացվել է ընդհանուր թվով 12 դրամաշնորհային հայտ:




Ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ հրատարակված աշխատանքների 74%-ը բաժին է ընկնում ՀՀ–ում հրատարակվող մասնագիտական ամսագրերին, ինչը նշանակում է, որ միջազգային գիտական հանդեսներիում հրատարակությունները սակավաթիվ են և այդ ուղղությամբ աշխատանքների ինտենսիվացման անհրաժեշտություն կա:

2019-2020 թ.թ. ընդլայնվել է համագործակից երկրների աշխարհագրությունը՝ ներառելով ԱՄՆ-ն (Աթլետիկ Թերապիայի միջազգային ֆեդերացիա, Սպորտային բժշկության հայ-ամերիկյան կոալիցիա), Հնդկաստանը (SPAA India, Amity University) միջազգայինի հաշվետվությունից: Արտասահմանյան գործընկերների հետ կնքվել է 11 նոր պայմանագիր: Համավարակի բռնկման հետևանքով պայմանագրերի շրջանակում միջազգային գիտական շրջանակների հետ շփումներն ու համագործակցությունը իրականացվել է հիմնականում հեռավար ձևաչափով՝ ապահովելով նաև սովորողների և բուհի երիտասարդ աշխատակիցների ակտիվ մասնակցությունը միջազգային տեսակոնֆերասներին:

Նույն ժամանակահատվածում նշանակալի աշխատանք է տարվել միջազգային «**Էրազմուս+**» դրամաշնորհային ծրագրում ներգրավվելու ուղղությամբ:

Միջազգային համագործակցության տիրույթում զգալի աշխատանքներ են տարվել հայ-հնդկական համատեղ կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար նախադրյալներ և կազմակերպահրավական հիմքեր ստեղծելու համար: ՀՖԿՍՊԻ–ի և SPAA INDIA սպորտային ակադեմիայի դասավանդողները քննարկել և համաձայնեցրել են կրթական ծրագրի, ուսումնական պլանի կառուցվածքը, հաշվարկել և հատկացրել կրեդիտներ, գովազդել կրթական ծրագրի հնարավորությունները հավանական դիմորդների շրջանակում: «Սպորտային ֆիզիոթերապիա» հեռավար դասընթացները նախատեսված է իրականացնել 2020-2021 ուսումնական տարում:

Ինստիտուտում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՀՖԿՍՊԻ սովորողներն իրականացնում են հետազոտական աշխատանքներ կրթական ծրագրերում սահմանված պարտադիր կառուցամասերի պահանջներին և իրենց գիտահետազոտական հետաքրքրություններին համապատասխան: Նկատի ունենալով յուրաքանչյուր մագիստրանտի ներուժը և գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ ամբիոնի վարիչի, ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի ղեկավար դասախոսի կողմից ուսանողին ներկայացվում են այն թեմաները, որոնք կարող են նրան հետաքրքրել:

Հետազոտական ոլորտը ներառում է ուսումնական ծրագրերի որոշակի բաղադրամասեր՝ ասպիրանտական ծրագիրը գրեթե ամբողջությամբ, առանձին կրթամասը մագիստրատուրայում և «Մասնագիտական պրակտիկա», «Ավարտական աշխատանք» կրթական մոդուլները բակալավրիատում: Բակալավրի կրթական ծրագրերում ավարտական աշխատանքի կատարումը դարձել է պարտադիր 2020/2021 ուստարվանից մագիստրոսական կրթական ծրագրերում ներդրվել է «Գիտական սեմինար» դասընթացը:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

**3.1 ՀՖԿՍՊԻ Պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմը. սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ**

«Որակյալ մարդկային ռեսուրսներ» ռազմավարական նպատակով սահմանված է զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Առաջնորդվելով բարձրակարգ գիտամանկավարժական կազմ ձևավորելու և մասնագիտական ներուժը պարբերաբար զարգացնելու հիմնարար արժեքով՝ Ինստիտուտի գործունեության հենասյունը պրոֆեսորադասախոսական կազմն է, որի շնորհիվ ՀՖԿՍՊԻ–ն իրականացնում է իր առաքելությունը:

ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող 4 բակալավի և 8 մագիստրոսի կրթական ծրագրերը նպատակաուղղված են ֆիզիկական կրթության, սպորտի, մարզչական, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, մարզական լրագրության, մենեջմենթի, մարքեթինգի և սպորտի հոգեբանության ոլորտների մասնագետների պատրաստմանը:

Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ ունենալը, ոլորտի

լավագույն մասնագետներին ներգրավելը և պահպանելը, ինչպես նաև սահուն սերնդափոխություն իրականացնելը կարևոր է ՀՖԿՍՊԻ համար: Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրելու համար հայտարարվում է մրցույթ, որի միջոցով ստուգվում են մրցույթին դիմած դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրի նպատակներին կամ աշխատանքի են հրավիրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման և ձևավորման գործընթացում կարևորվում են դասախոսական կազմի տարիքային գործոնները:

2019-2020 ուսումնական տարում պրոֆեսորադասախոսական համակազմում արված համալրումները ուղղակիորեն հանեգցրել են դասախոսական կազմի երիտասարդացմանը՝ ըստ այդմ՝ նվազել է նաև ՊԴ կազմի միջին տարիքի ցուցանիշը և կազմել 50,4 (նախկինում՝ 70 տ.):

ՊԴ կազմի երիատասարդացման տեսանելի միտում է գրանցվել մասնավորապես Մարզական լրագրության, Սպորտի կառավարման և մարքեթինգի, Հասարակակա և հումանիտար գիտությունների ամբիոններում:




***Գծապատկեր 13 . ՊԴ կազմի տարիքը***

2019-2020 ուսումնական տարում յուրաքանչյուր կրթական ծրագրին համապատասխան դասախոսական կազմ ձևավորելու կամ այն համալրելու համար գործնականում առավել ակտիվ կիրառվել է մրցութային կարգը՝ թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը տարածելով բուհի պաշտոնական և ֆեյսբուքյան էջում:




***Գծապատկեր 14. ՊԴ համակազմը՝ ըստ գիտական աստիճանների***




**Գծապատկեր 15. Դասավանդող կազմի հաշվեկշիռը՝ ըստ գիտական կոչումների**

Հաշվետու ժամանակահատվածում Ինստիտուտում աշխատանքի է ընդունվել 63 աշխատակից, աշխատանքից ազատվել է 183-ը, որից 3-ը՝ հաստիքի կրճատման արդյունքում, 62-ը՝ անձնական դիմումի համաձայն, 116-ը՝ պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ համապատասխան ծանուցումներով, իսկ 2-ը՝ մահվան հիմքով: Աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալու հիմքով ազատված աշխատողները հիմնականում հրավիրվել են աշխատանքի 2020-2021 ուսումնական տարում:

ՀՖԿՍՊԻ-ի ՊԴ կազմի համալրումն իրականացնում է նաև բուհի լավագույն շրջանավարտների միջոցով՝ նրանց հնարավորություն ընձեռելով շարունակելու ուսումնառությունը կրթական հաջորդ մակարդակում:




ՀՖԿՍՊԻ-ում կարևորում է մասնագիտական բարձր որակներ և գործատու ոլորտի փորձառու մասնագետների ներգրավումը կրթական գործընթացում, ինչը թույլ է տալիս երաշխավորելու կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող դասախոսական կազմով:

Ընդգծենք, որ համատեղությամբ աշխատողները պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում ՀՀ պետական կառավարման մարմիններում և գործատու ոլորտի առաջատար կազմակերպություններում և ընկերություններում:

***Գծապատկեր 17 . Գործատու ոլորտի ներկայացուցիչների ներգրավվածությունը ՀՖԿՍՊԻ ՄԿԾ-ում***

ՊԴ կազմի համալրման գործընթացի կանոնակարգային կառուցակարգերի հստակեցման նպատակով 2019-2020 ուսումնական տարում վերանայվել են աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը և մշակվել են բոլորովին նոր բովանդակությամբ՝ վարչական աշխատողների, հրավիրված մասնագետների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և հրավիրված դասախոսի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևեր, որտեղ

զգալիորեն փոփոխվել և լրացվել են «աշխատողների իրավունքներ և պարտականություններ», «աշխատողի վարձատրություն» գլուխները, ավելացվել են նաև «աշխատողի ծանուցում», «աշխատողի պատասխանատվություն», «պայմանագրի փոփոխում և լուծում» բաժինները: Այսօրինակ փոփոխությունների արդյունքում աշխատանքային պայմանագրերը համապատասխանեցվել են ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին:

2019-2020 ուսումնական տարում մեկնարկել է աշխատողների «պաշտոնի նկարագրերի» մշակման գործընթացը, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2021 թվականի ընթացքում:

Պաշտոնի նկարագրերը կազմվել են ըստ յուրաքանչյուր հաստիքի (պաշտոնի) և ներառել են տվյալներ պաշտոնի՝ կառուցվածքային ստորաբաժանմանը պատկանելիության, ենթակայության, պատասխանատվության շրջանակի, պաշտոնից բխող գործառույթների, տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունների և անձնային որակների մասին:

2019-2020 ուսումնական տարում հայտարարվել է թափուր աշխատատեղի համալրման 18 մրցույթ, որոնց հիման վրա ստացվել է ընդհանուր 568 ինքնակենսագրական:

Մրցույթին դիմած անձանց ընտրությունը կայացել է շահագրգիռ ստորաբաժանման հետ համատեղ: Ընտրված թեկնածուները հրավիրվել են հարցազրույցի:

«Անգլերեն և ռուսաց լեզվի դասախոսների» ընտրության մրցույթը կազմակերպվել է 3 փուլով՝ ինքնակենսագրականների նախնական ընտրություն, հարցազրույց և «դեմո դաս»-ի անցկացում:

Թեկնածուների հետ կայացած հարցազրույցների արդյունքում կազմվել են արձանագրություններ, որը Մարդկային ռեսուրսների և ընդհանուր բաժնի կողմից ներդրված նոր գործառույթ է:

## 3.2 Վարչական և ուսումնաօժանդակ կազմը

Վարչական և ուսումնաօժանդակ կառույցների գործունեության արդյունավետության շարունակական կատարելագործումը ամրագրված է ՀՖԿՍՊԻ զարգացման ռազմավարական ծրագրում:

ՀՖԿՍՊԻ-ի ուսումնաօժանդակ անձնակազմը ներկայումս ընդգրկում է 25 աշխատակից, իսկ վարչականը՝ 124:

2019 թ.-ին ՀՖԿՍՊԻ նոր կազմակերպական կառուցվածքի ներդրման արդյունքում վարչական կառուցվածքում կատարվել են առանցքային փոփոխություններ:Վարչական համակազմի աշխատակիցների վերամշակված գործառույթներով տարանջատվել են աշխատակիցների պատասխանատվություններն ու պարտականությունները:

2019-2020 ուստարում բուհում ընթացող բարեփոխումներին զուգահեռ ստեղծվել և վերակազմավորվել են մի շարք ստորաբաժանումներ՝ համապատասխան աշխատակազմերով, որոնք ևս ձևավորվել են մրցութային կարգով:

Որոշ բաժինների հիմքի վրա վերակազմակերպվել են նոր ստորաբաժանումներ: Ուսումնական մասի հիմքի վրա ստեղծվել է Ուսումնագիտական բաժինը՝ բակալավրի, մագիստրատուրայի (առկա/հեռակա) ենթաբաժինների աշխատակիցներով:

Ստեղծվել են նոր կառուցվածքային միավորներ՝ ինչպես օրինակ՝ Ինստիտուցիոնալ և համագործակցային զարգացման ծրագրերի բաժին, Իրավական ապահովման բաժին, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, Ներքին անվտանգության բաժին, Հասարակության հետ կապերի պատասխանատու:

Մշակման գործընթացում են վարչական ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնի անձնագրերը, որտեղ ներկայացված կլինեն աշխատողների աշխատանքային պարտականություններն ու գործառույթները, պահանջվող մասնագիտական հմտություններն, անձնային որակները: Կանոնակարգման փուլում են նաև ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի գործունեության վերահսկման, տարբեր տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարման գործընթացները, որը հնարավորություն կտա հստակեցնել տարբեր հաստիքների ձևավորման սկզբունքները, վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ հաստիքների աստիճանակարգումը, նշված հաստիքների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները՝ ինչպես նաև տարանջատել աշխատողների իրավասությունների շրջանակները:

Ուսումնաօժանդակ կազմի գործունակության ցուցանիշների բարելավման նպատակով անցկացվել է վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորում:

2019-2020 ուսումնական տարում կազմակերպվել է 2 ատեստավորում գրադարանի աշխատողների և ամբիոնների լաբորանտների շրջանում: Գրադարանի աշխատողների ատեստավորման նպատակն էր ստուգել գրադարանի աշխատողների գիտելիքները՝ գրադարանային գործին վերաբերող ՀՀ օրենսդրության և համակարգչային գիտելիքների մասով:

Ամբիոնների լաբորանտների շրջանում անցկացված ատեստավորման արդյունքում ստուգվել է վերջիններիս համակարգչային գրագիտության մակարդակը:

### 3.3 Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

2019-2020 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ հատուկ ուշադրություն է դարձրել դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների զարգացմանը:

2019-2020թ.թ. ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման կողմից (ՈԱԲ) մշտադիտարկվել ու գնահատվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:

Մշտադիտարկումների արդյունքների, կրթական ծրագրերի ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրությունների հիման վրա ուրվագծվել են կրթական ծրագրերի բարելավման ուղիները:

Հարկ է նշել, որ հաշվետու տարում Ինստիտուտում մասնագիտության կրթական ծրագրերի վերանայումը դարձել էր առօրյա խնդիր՝ կարևորելով ՄԿԾ–ների որակի կառավարման և շարունակական բարելավման մշակույթի ձևավորումը բուհում, առաձնակի ուշադրություն դարձնելով դասավանդողների կարողությունների բարելավմանը:

Ընդգծենք, որ ՈԱԲ-ը վերջին տարում ակտիվացրել է համագործակցությունը մասնագիտության կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ՝ պարբերաբար մասնակցելով կենտրոնի կողմից անցկացվող կլոր-սեղան քննարկումներին, փորձագետների պատրաստման և վերապատրաստման դասընթացներին:

2019-2020թ.թ. ՈԱԲ նախաձեռնությամբ էականորեն ակտիվացել են կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովմանը առնչվող ներքին և արտաքին խորհրդատվական հանդիպումներն ու վերապատրաստումները:

***Ներքին վերապատրաստումները իրականացվել են հիմնականում հետևալ թեմաներով.***

- ✓ ***Վերջնարդյունքահեն կրթություն***.դասավանդման, ուսումնառության մեթոդների շարունակական բարելավում և արդիականացում, ուսանողի գնահատման քաղաքականություն (սովորեցնող/ձևավորող գնահատման շեշտադրումով):

ՈԱԲ-ը ձգտում է ամրապնդել շահակիցների երկխոսությունը դասավանդման և ուսումնառության համակարգի խնդիրների վերաբերյալ, խթանում դասավանդողների կողմից կիրառվող ուսուցման մեթոդների արդիականացման, բազմազանեցման և նորարարությունների ներդրման նախաձեռնությունները:

- ✓ ***Ինչպե՞ս բաշխել և հատկացնել կրեդիտներ.*** Ֆակուլտետների դեկանների և դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ քննարկվել են ուսումնական պլանների վերանայման, կրեդիտների բաշխման հարցը: Ուսումնասիրվել են ուսումնական պլանում յուրաքանչյուր կիսամյակի առարկաների կրեդիտների ռացիոնալ և համաչափ բաշխման մոտեցումները, հստակեցվել բակալավրի և մագիստրոսի կրթաբլոկների հարաբերակցության պահպանման սկզբունքները: Կոնկրետ օրինակներով դիտարկվել են «Լրագրություն» և «Կինեզոլոգիա» բակալավրի կրթական ծրագրերի առարկաների, պրակտիկաների և ավարտական աշխատանքի կատարման կրեդիտների հատկացման մոտեցումները: Ուսումնական պլանի վերանայման աշխատախմբերին փոխանցվել է նաև ամփոփ ուղեցույց:

- ✓ ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող դասալսումների կազմակերպման, անցկացման և արդյունքների օգտագործման նոր ընթացակարգի ներդնում:

✓ ***Ինչպե՞ս մշակել ուսանողի գիտելիքի գնահատման չափանիշ/չափորոշիչներ»*** թեմայով աշխատաժողովին երկու ֆակուլտետի դեկաններին, 14 ամբիոններից ներկա դասախոսներին ներկայացվել են ուսանողների չափանիշահեն գնահատման առանցքային մոտեցումներն և «Սպորտի սոցիոլոգիա» առարկայի օրինակով մանրամասնվել է գնահատման ռուբրիկների կառուցումը, անդրադարձ արվել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ու ուսումնառության վերջնարդյունքների փոխկապակցմանը:

Արդյունքում՝ ՈԱԲ-ի կողմից վերամշակված առարկայական նկարագիրը[2] հնարավորություն է տալիս դասավանդողներին ֆորմալացնել իրենց դասավանդման փորձը, քարտեզագրել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կապը՝ պարբերաբար հետազոտելով սեփական գործունեության ձեռքբերումներն ու դժվարությունները:

Ծավալուն խորհրդատվական աշխատանք էիրականացվել մասնավորապես դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության վերանայման վերաբերյալ, կարևորվել է բուհում կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը՝ մանրամասնելով դասավանդման և ոսումնառության նոր մեթոդներն ու մոտեցումները՝ ինչպես օրինակ՝ «շրջված լսարան»,անհատականացված դասավանդում, քննողական ուսումնառություն (inquiry based learning), դասախոսը՝ որպես ֆասիլիտատոր:

ՈԱԲ-դասախոսներ ակտիվ քննարկումները օգնել են, որ վերաիմաստավորվի դասախոսի ակադեմիական ինքնավարությունն ու ազատությունները, դասավանդման համատեքստում խթանվի ստեղծարարությունն ու առաջավոր փորձի տարածումը կրթական գործընթացում:

Կրթական գործընթացի բարեփոխումները դյուրությամբ ու թիմային փոխաջակցող մթնոլորտում իրականացնելու համար շահակիցներին պարբերաբար տրամադրվել են նաև ՈԱԲ մշակած ուղեցույցներ և տեղեկատվական նյութեր[3], դրանցում ներկայացված մոտեցումներն ու մոդելները ևս պարզաբանվել են առանձին հանդիպումների ընթացքում:

ՈԱԲ-ը կանոնավոր պարբերականությամբ (յուրաքանչյուր չորեքշաբթի կամ ուրբաթ) անցկացրել է հարցուպատասխանի ձևաչափով «Որակի օրեր» խորագրով հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են մասնագիտական կրթության ոլորտի հիմնախնդիրները, նորամուծությունների ներդման և բարեփոխումների իրականացման ռիսկերն ու դրանց արդյունավետ կերպով արձագանքելու ուղիները:

Այսպիսով՝ կրթության որակի ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը ներքին շահակիցներին մշտական բնույթ է կրում. ՈԱ խնդիրների

[2] https://drive.google.com/drive/folders/15uT260PA8ITCezoTElB3JQTOeX_fGmgy
[3] https://drive.google.com/drive/folders/1ZvS10qNQei8f7cmaR_o6BnfM1vCqwQPJ

հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվություններ տրվել են նաև առցանց տեսահանդիպումների ձևաչափով:

Դասախոսական կազմի համար իրականացվել են նաև հաղորդակցման հմտությունների զարգացմանը, դասավանդման գործընթացում հույզերի ճանաչմանն ու կառավարման հմտությունների կատարելագործմանը միտված վերապատրաստումներ:

***Արտաքին վերապատրաստումներ***

2019-2020 ուստարում ձևավորված ՄԿԾ աշխատանքային խմբերի գործունակությունը խթանելու նպատակով անցկացվել է «***ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ»*** թեմայով վերապատրաստման դասընթացների շարք, որը իրականացվել է ՈԱԱԿ-ի մասնագետների կողմից:

ՄԿԾ-ի որակի ապահովման գործիքակազմի և մեխանիզմների խորքային ուսումնասիրման նպատակով 2020 թ.-ի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 4-ը իրականացվել է վերապատրաստման առցանց դասընթաց[4]: ՈԱԲ-ի կողմից ձևավորված թիմի կազմում էին՝ ՈԱ բաժնի ղեկավարը, ֆակուլտետների դեկաններ, ամբիոնի վարիչներ, դասախոսներ և միջազգային համագործակցության բաժնի ղեկավարը:

Վերապատրաստման նպատակն էր նաև աջակցել հավատարմագրման ներկայացված ԿԾ–ի համապատասխան չափանիշ/չափորոշիչների ինքնավերլուծության իրականացմանը: Վերապատրաստումները անցկացվել են գործնական ձևաչափով՝ հիմնականում հղում տալով բուհում իրականացվող առանձին գործընթացներին և մասնակիցներին քայլ առ քայլ ցույց տալով ՄԿԾ–ի որակի ապահովման և գործիքների ներդրման եղանակներն ու մոդելները:

Վերապատրաստման ավարտին ՈԱԲ-ի կողմից անցկացվել է հարցում, որի նպատակն էր պարզել՝ որքանով են մասնակիցները բավարարված մատուցված նյութի բովանդակությունից և որքանով է այն ծառայել նախանշված նպատակին:

Մասնակիցների 90%-ը նշել է, որ դասընթացի մատուցման մեթոդները արդյունավետ էին և ներկայացված նյութը կիրառելի կլինի սեփական գործունեության համատեքստում:

[4] https://drive.google.com/drive/folders/1FMEKkr09OVZ0zAQ25EojtSpX1QuW8t6j

***Գծապատկեր 18. Վերապատրաստման ծրագրի արդյունավետությունից մասնակիցների բավարարվածության մակարդակը***

Հարցվածների 60%-ի կարծիքով ինքնավերլուծության իրականացման համար ներկայացված նյութն ու հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների մեկնաբանությունը մատչելի էին և արդյունավետ, 30%-ը կատարված աշխատանքը բավարար է գնահատել այս տեսանկյունից, իսկ 10%-ը տվել է բացասական պատասխան:

Ի մի բերելով դասընթացի ընթացքում մասնակիցների ձեռքբերած գիտելիքները, ակնհայտ է դառնում, որ այն, ըստ էության, կարևոր էր և օգտակար ՄԿԾ–ի պատասխանատուների և աշխատանքային խմբերի անդամների համար:

Վերապատրաստման ծրագրի ավարտին՝ սեպտեմբերի 29-ից մինչև հեկտեմբերի 2-ը ՈԱԲ-ը և վերապատրաստման դասընթացի մասնակիցները՝ ֆակուլտետի դեկանները և ամբիոնի վարիչները համատեղ հանդիպումներ են ունեցել՝ քննարկելու վերապատրաստման արդյունքում ձեռքբերված գիտելիքների կիրառման հնարավորությունները սեփական դասավանդման փորձում: Յուրաքանչյուր ամբիոնի դասախոսական կազմի համար ՈԱԲ-ը մանրամասն ներկայացրել է դասավանդման, ուսումնառության, գնահատման նոր մեթոդները և նրանց կապը կրթական վերջնարդյունքների հետ:

Վերապատրաստման արդյունքում առարկայական ծրագրերում ներառվել են աշխատաշուկայի պահանջարկներին համապատասխանող նոր առարկաներ, դասավանդվող առարկաների շրջանակում արդի թեմաներ:

2019-2020 ուստարում դասախոսների որակավորման բարձրացման և վերապատրաստման ծրագրերը իրականացվել են մի քանի ուղղություններով՝ ներառելով նաև թվային գրագիտության հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումները, որոնց անհրաժեշտությունը ընդգծվել է ուսանողական

ուսանողական[5], դասախոսական հարցումներում[6] և ֆոկուս խմբային[7] հետազոտություններում:

Հաշվի առնելով վերհանված կարիքների հիման վրա վերապատրաստում կազմակերպելու կարևորությունը՝ ՀՖԿՍՊի-ի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանի անմիջական նախաձեռնությամբ ու ՈԱԲ-ի ղեկավարի համակարգմամբ բոլոր ամբիոնների դասախոսական կազմի ներակայցուցիչներ գործուղվել են Երևանի պետական համալսարան՝ մասնակցելու ԵՊՀ մասնագետների կողմից իրականացվող «Համակցված ուսուցում» վերապատրաստման դասընթացներին:

Կարևորելով բացահայտված կարիք-նպատակային վերապատրաստում-ակնկալվող արդյունք-արդյունքի գնահատում որակի ապահովման գործելակերպի արմատավորումը ինստիտուտում՝ վերապատրաստման ծրագրի ավարտին ՈԱԲ-ի կողմից վերապատրաստված դասախոսների հետ անցակցվել է հարցում, որի արդյունքները արտահայտում եմ մասնակիցների ընդհանուր գոհունակությունը՝ ընդգծելով որ դասընթացը հնարավորություն է տվել մասնակից դասախոսներին յուրացնել ու կիրառել համակցված և հիբրիդային ուսուցման գործիքները:

Վերապատրաստման այս ծրագրի երկրորդ փուլի շրջանակում Ինստիտուտի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համագործակցությամբ մշակվել են նույն թիմին շարունակական տեխնոլոգիական աջակցում տրամադրելու ռազմավարությունը, որի նպատակն է «Google Classroom»-ի օրինակով դիտարկել ու վերլուծել ժամանակակից կրթական համակարգի՝ հեռավար ուսուցման մեթոդաբանական խնդիրները, հստակեցնել հեռավար ուսուցման համար անհրաժեշտ գործիքակազմը:

Կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով ՏՏ բաժնի աջակցությամբ ակտիվացել է ուսանողներին դասախոսությունները, առաջադրանքը և նյութերը էլեկտրոնային ձևով տրամադրելու ակտիվ գործընթացը: **Վերապատրաստումը՝ ոչ ֆորմալ կրթության ձևաչափով**

Կարևորելով շարունակական և լրացուցիչ կրթության դերը մասնագետների պատրաստման գործընթացում՝ այժմեական և արդիական է վերապատրաստման դասընթացների իրականացումը ոչ ֆորմալ կրթության շրջանակներում, որը հնարավորություն կընձեռի և՛ ուսանողներին, և պրոֆեսորադասախոսական անձնակազմին, և՛ ուսումնաօժանդակ, և վարչական աշխատակիցներին զարգացնել և կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները և հմտությունները: ՀՖԿՍՊԻ կայուն զարգացման հրամայականն է վերապատրաստման դասընթացների իրականացումը, որը նախատեսում է.

1. երկարաժամկետ և կարճաժամկետ ուսուցողական ծրագրերի իրականացում,

[5] https://drive.google.com/drive/folders/1FMEKkr09OVZ0zAQ25EojtSpX1QuW8t6j
[6] https://drive.google.com/drive/folders/1FSdmN0AqF9CZuBiJBPzRo7p--LVKs-4s
[7] https://drive.google.com/drive/folders/1FMEKkr09OVZ0zAQ25EojtSpX1QuW8t6j

2. վարպետաց դասերի, կլոր- սեղան քննարկումների, սեմինարների անցկացում,
3. գործնական պարապմունքների իրականացումը,
4. կորպորատիվ թրեյնինգների իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում բուհում իրականացվել են մի շարք լսարանային և առցանց վերապատաստման դասընթացներ, որոնք նպաստել են աշխատակիցների ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանրական և «փափուկ հմտությունների» զարգացմանը:

## ՆՊԱՏԱԿ 4.

## ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

**«Որակյալ ենթակառուցվածքներ»** ռազմավարական նպատակով սահմանված է «ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող ռեսուրսային ենթակառուցվածքներ» Նախատեսված է զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, բազմազանեցնել ինստիտուտի ֆինանսական աղբյուրները և դրանք նպատակուղղել հաստատության զարգացման կարիքներին:

**4.1 Ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում**

Դիտարկվող ժամանակահատվածում բուհում իրականացվել են հիմնանորոգման ծավալուն աշխատանքներ:Վերանորոգման և շինարարական աշխատանքներ են իրականացվել ՀՖԿՍՊԻ տարբեր մասնաշենքերում, որի համար ծախսվել է շուրջ 29 միլիոն դրամ: Իրականացվել է 2-րդ մասնաշենքի՝ ամբողջությամբ 4–րդ հարկի վերանորոգում:

Հաշմանդամություն ունեցող ուսանողների ազատ տեղաշարժն ապահովելու համար կառուցվել են թեքահարթակներ բուհի գլխավոր մասնաշենքում: Ներառակա կրթության իրականացման նախադրյալներ ստեղծելու նպատակով բացվել է ներառական լսարան, վերանորոգվել են սանհանգույցները, որտեղ նախատեսվել են առանձին հատվածներ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Վերանորոգվել են վարչական մասնաշենքի սանհանգույցները, որոնք նախկինում խիստ անբարեկարգ վիճակում էին. նախատեսվում է հիմնանորոգել ևս 8-ը:

Ուսումնական կարիքների բավարարման ու արդյունավետ պլանավորման նպատակով ամբիոնների, համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայացվել են պահանաջագրեր և զեկուցագրեր, որոնց հիման վրա ձեռք են բերվել անհրաժեշտ ռեսուրսներ: Ներկայացված պահանջագրերի մեծ թիվը ցույց է տալիս, որ բուհում եղել է տեխնիկական անհրաժեշտ վերազինումների և հագեցվածության պակաս:

Համապատասխան տեխնիկական միջոցներով և սարքավորումներով լրացուցիչ ապահովման ու թարմացման անհրաժեշտությունը հիմնավորող պահանջագրերը, որպես կանոն, բավարարվել են և հետևողական կերպով ընթացք է տրվել անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործընթացին:

Այսպիսով՝ լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները տեխնոլոգիապես վերազինելու համար 2019/2020 ուստարվա ընթացքում կատարվել է 37 միլիոն դրամի ներդրում, որի շրջանակում ձեռք են բերվել համակարգչային գույք (64), համակարգչային պարագաներ, դյուրակիր համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպագրական սարքեր, տեսահսկման սարքեր, տեսախցիկներ, վեբ և շարժական տեսախցիկներ, խոսափողներ և ականջակալներ:

2020-2021 ուսումնական տարում բուհ է ընդունվել 650 ուսանող, ինչը ամենաբարձր ցուցանիշն է վերջին տասը տարվա համար: Այս ցուցանիշների փոփոխականը հանգեցրել է լսարանային տարածքների ավելացմանն ու նորոգմանը, ուսումնական գործընթացին օժանդակող ռեսուրսների ձեռքբերմանը, ինչպես նաև՝ դասախոսական կազմի համալրմանը:




Ներկայացված գծապատկերից երևում է, որ կայուն հենքի վրա են դրվել հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներն ու նյութատեխնիկական հիմնական միջոցների, սարքավորումների ձեռքբերումը, որի նպատակն է բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը: Ընդհանուր միտումն առանձին ուղղություններով ծախսերի ավելացումն է՝ պայմանավորված տվյալ տարվա նպատակադրումներով և առաջնահերթություններով:

Թեև բուհում առկա են կրթական գործընթացի կազմակերպման համար բավարար պայմաններ, սակայն իրականացվող ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունակական բարելավումը շարունակում է մնալ ՌԾ-ում ամրագրված խնդիր: Լսարանները դեռևս հարմարեցված չեն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու և գործնական դասեր կազմակերպելու համար, իսկ Smart զրատախտակների և համակարգչով ու պրոյեկտորով հագեցած լսարանների քանակը սակավաթիվ է:

Մարզադահլիճներում առկա մարզական գույքը մաշված է, դահլիճին կից հանդերձարանները փոքր են, կահավորված չեն անհրաժեշտ գույքով և ունեն հիմնանորոգման կարիք: Սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանելու տեսանկյունից ևս մարզադահլիճների սանհանգույցները վատ վիճակում են:

Թեև ֆինանսական միջոցները կառավարվում են հնարավորինս նպատակային, այդուհանդերձ ֆինանսական հատկացումների բաշխման, կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումը ընթացիկ գերակայություն է և գտնվում է ՀՖԿՍՊԻ ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացումը ևս օրակարգային հարց է, որի լուծման համար տարվում են Ինստիտուտիմատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի առևտրայնացման, վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին բուհի մասնակցությունն ակտիվացնելու միջոցով:

## 4.2 Գրադարանային միջավայրի վերափոխում, ընթերցասրահների գրավչության բարձրացում

ՀՖԿՍՊԻ կազմակերպական կառուցվածքում իրականացված փոփոխությունների արդյունքում գրադարանի զարգացումը բուհում դիտարկվում է իբրև ռազմավարական ուղղություն: Ներկայումս մշակվում է գրադարանի զարգացման ծրագիր, որը հնարավորություն կտա բարելավել գրադարանային ֆոնդի համալրումները. նախատեսվում են բարեփոխումներ գրադարանային սպասարկման, գրադարանային ֆոնդի թվայնացման, տեղական միջգրադարանային և միջազգային գրադարանային ցանցերի, գիտատեղեկատվական շտեմարանների հետ համագործակցության ձեռքբերման և զարգացման ուղղություններով:

Հաշվետու տարում ամբողջականացվել է հիմնական ուսումնական գրականության թվայնացման և գրադարանի էլեկտրոնային քարտարանի ձևավորման գործողությունների փաթեթը: Գրադարանն ունի 2858 ընթերցող՝ 277 աշխատող և 2581 ուսանող:

2020թ. սեպտեմբերից գրադարանում իրականացվել են գույքագրման և հաշվառման աշխատանքներ: Կատարվել են ընթերցասրահի և սպասարկման բաժնի գրականության վերագրանցման աշխատանքներ, որը ներառել է 56825 կտոր գիրք: Մեկնարկել են գրապահոցի գրականության վերագրանցման աշխատանքներ, առանձնացվել են արդիականությունը կորցրած, հնամաշ գրքերը և դուրս են գրվում գրադարանի ֆոնդից: Գրադարանային ֆոնդը համալրվել է անհրաժեշտ և պահանջված գրականությամբ: Գրադարանը նվիրատվության կարգով ստացել է 194 անուն գիրք: Էլեկտրոնային գրադարանը ևս համալրվել է նոր գրքերով՝ կազմելով ընդհանուր 1200 անուն գրականություն:

Մշակման փուլում է գրադարանի զարգացման հայեցակարգը, որով նախատեում է ստեղծել էլեկտրոնային ռեսուրսների ներբուհական պորտալ, ընդլայնել գրադարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, բարձրացնել ուսանողների և դասախոսական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին:

Գրադարանային ֆոնդի համալրումը կատարվում է ներքևից վերև եկող առաջարկություններով. ամբիոնների և այլ ենթակառուցվածքների կողմից ներկայացվում է համապատասխան պահանջարկը, որը ձեռք է բերվում նախապես հատկացված գումարներով: Արդյունքում ակտիվացել է համագործակցությունը ամբիոնների հետ, օնլայն գրախանութներից գնումներ իրականացնելուց առաջ ամբիոններից հավաքագրվել է ժամանակակից պահանջված մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականության ցանկ:

Ինստիտուտի գրադարանի զարգացման բնագավառում կարևոր խնդիր է տեղեկատվական ծավալի ընդլայնումը՝ առավել արդիական գիտական և ուսումնամեթոդական տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Այդ նույն նպատակով ստեղծվել է էլեկտրոնային գրադարանը: Օրակարգային խնդիր է ՀՀ էլեկտրոնային գրադարանների հետ համագործակցության հաստատումը և էլեկտրոնային քարտարանի ստեղծումը:

Գրադարանային միջավայրի վերափոխման աշխատանքների շրջանակում նախատեսվում է ստեղծել քննարկումների համար առանձին սենյակներ, ճեմասրահում «փափուկ» հատվածներ քննարկումների համար: Գրադարանում սպասարկումն կիրականացվի բաց դարակների սկզբունքով:

Գրադարանը նպատակ ունի նաև կատարել հետևյալ աշխատանքները.

1. Փոխել ողջ գրադարանի կառուցվածքը. գրապահոցը պետք է հասանելի լինի ընթերցողի համար:
2. Օտարել ողջ մաշված, արդիականությունը կորցրած գրականությունը, հանձնել մակուլատուրա՝ ձեռք բերել նոր գրքեր: Դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ նոր գրքեր ձեռք բերելու համար: Հաշվառել մերժումների քանակը և դրա հիման վրա կազմակերպել համալրման աշխատանքները:

3. Գրադարանի վեբ-կայքի պատրաստում: Ակտիվ գործարկել էլեկտրոնային կայքը, մեծացնել էկլեկտրոնային գրականության հասանելիությունը:
4. «Գրադարանը՝ ինչպես ինտելեկտուալ զարգացման կենտրոն». տարածք՝ նախատեսված կլոր սեղանների, դասախոսությունների, սեմինարների, կոնֆերանսների, գիտական թեզերի պաշտպանության համար:
5. Կատարել դասախոսների հեղինակած գրքերի շնորհանդեսներ, որոնք կոգևորեն և՛ դասախոսին, և՛ ուսանողին: Ստեղծել այնպիսի շտեմարան, որը կօգնի ուսանողին դյուրությամբ պատրաստվել քննություններին:
6. Ամեն ամիս անցկացնել «Ինֆորմացիոն օրեր», տպագրել տեղեկագրեր՝ «Ֆոնդային նոր համալրումներ» խորագրով
7. Համագործակցել այլ գրադարանների հետ՝ փորձի փոխանակման նպատակով, ակտիվ ներգրավվելով վերապատրաստման բոլոր ծրագրերին
8. Իրականացնել թրեյնինգներ սպորտային բովանդակությամբ նոր հրատարակությունների վերաբերյալ
9. Պատրաստել կարծիքների հարթակ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց առաջարկները և դժգոհությունները
10. Ստեղծել գրքափոխանակության անկյուն (դասախոսությունները ևս կարող են ներառվել գրադարանի ֆոնդում՝ ամրապնդելով գրադարան - ամբիոն կապը):

## 4.3 ՀՖԿՍՊԻ–ում ստեղծված է ապահով և անվտանգ աշխատանքային միջավայր

Ինստիտուտում առողջության և անվտանգության պահպանման ծառայությունները մատուցվում են համապատասխանաբար ամբուլատորիայի և ներքին անվտանգության բաժնի կողմից, որոնցից վերջինը բուհում ստեղծվել է 2019-2020 ուստարում: Բաժնի աշխատակիցները իրականացնում են ինստիտուտի մասնաշենքերի և գույքի պահպանության, ուսանողների և աշխատակիցների անվտանգության ապահովման, շուրջօրյա ռեժիմով հերթապահության գործառույթներ:

Ամբուլատորիան իրականացնում է նաև ներբուհական ընդունելության քննութունների բժշկական սպասարկումը: Ամբուլատորիան ապահովված է անհրաժեշտ դեղորայքով և բուժզննում իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներով:

Ամբուլատորիան ֆինանսավորվում է ինստիտուտի բյուջեից, ծավալում է կենտրոնացված և ապակենտրոնացված գործունեություն՝ օրինակ մարզական պարապմունքների և բուհական խաղերի անցկացման համար սահմանվում են բուժանձնակազմի հերթապահություններ:

Առողջապահական ծառայություններ իրականացնող ամբուլատորիան տեղակայված է բուհի կենտրոնական մասնաշենքում, ինչը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ուսանողներին և աշխատակիցներին օպերատիվ կերպով ցուցաբերել առաջին բուժօգնություն:

2019-2020 ուստարում կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով բուժանձնակազմը օպերատիվ հերթապահություն է իրականացրել, կատարել ամենօրյա կանոնավոր ջերմաչափումներ, անհրաժեշտության դեպքում կատարել է բուժզննում և տրամադրել առաջին բուժօգնություն:

Հաշվետու տարում սպասարկվել է առկա և հեռակա ուսուցման 500 ուսանող, ինչպես նաև՝ ինստիտուտի աշխատակիցներ:

Պրոցեդուրա-վիրակապային կաբինետի կողմից սպասարկվել են 222 դիմող՝ տարբեր ցուցումներով՝ ներարկում, վիրակապություններ, վերքերի մշակում:

Առաջնային հիվանդությունները բնույթով բաշխվել են հետևյալ կերպ՝ 4 ինֆեկցիոն, 15 բրոնխիտ, 5 վիրաբուժական, 17 վիրահատված, 14 վնասվածքներ, 11 քթի կորեկցիա, 16 անգինա, ՍՌՀ (վերին շնչուղիների կատար) և այլ հիվանդություններ:

Հիվանդությունների վերաբերյալ ուսանողներին տրվել են բժշկական տեղեկանքներ:

Առկա ուսուցման ուսանողներից առաջնային հիվանդությամբ դիմողները՝ ըստ կուրսերի կազմել է հետևալ հարաբերակցությունը՝ առաջին կուրս՝ 35%, երկրորդ կուրս՝ 25%, երրորդ կուրս՝ 10%, չորրորդ կուրս՝ 3%:

Կատարվել են բժշկավերաստուգիչ աշխատանքներ՝ բոլոր կուրսերի ուսանողների հետ: Ուսանողների առողջական կոպիտ շեղումներ չեն բացահայտվել: ՈՒսումնական ողջ տարվա ընթացքում կատարվել են ձեռքերի մշակման և ջերմաչափման աշխատանքներ:

Ընդունելության քննությունների անցկացման նախօրեին կանոնավոր կերպով իրականացվել են շենքային տարածքի խորքային ախտահանումներ, բուհի ղեկավարությունը պարբերաբար իրազեկվել է հակահամաճարակային միջոցառումների ընթացքի վերաբերյալ:

Այսպիսով՝ առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի պաշտոնակատարի անմիջական ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին ՀՀ օրենքի դրույթները՝ ծխախոտի օգտագործման դեմ պայքարը ուժեղացնելու նպատակով ՀՖԿՍՊԻ ռեկտորի ժ/պ-ի հրահանգով բուհում ծխելը խստիվ արգելվում է:

Կարևորելով աշխատակիցների առողջության պահպանման, սոցիալական աջակցության տրամադրման հարցերը՝ աշխատանքներ են տարվում աշխատակիցներին սոցիալական փաթեթներում ընդգրկելու ուղղությամբ, նախատեսվում են մարզման անվճար պարապմունքներ անցկացնել բոլոր աշխատողների համար:

2019 թ.-ից ՀՖԿՍՊԻ-ում գործում է շուրջօրյա անվտանգության ծառայություն, որն իրականացնում է մասնաշենքերի և գույքի պահպանությունը, ապահովում

ուսանողների և աշխատողներ անվտանգությունը: Բաժնի անձնակազմը ընդգրկում է 19 աշխատող, որից 12-ը պահնորդական ծառայության կազմում է, 3-ը շրջիկ հսկիչ, 3-ը տեսահսկիչ:

2019 թ-ից բուհում ներդրվել է հակահրդեհային ծառայություն, իրականացվել են մասնաշենքերում հակահրդեհային պատրաստվածության գնահատման պրոֆիլակտիկ աշխատանքներ, բուհի անձնակազմը իրազեկվել է հակահրդեհային կանոնների վերաբերյալ: Ինստիտուտի մասնաշենքն ապահովված է հակահրդեհային ազդանշանային համակարգով, շինությունը տեսահսկվում է:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական

պաշտպանությունն իրականացնում է ՀՖԿՍՊԻ քաղաքացիական պաշտպանության շտաբը:

2020 թ.սեպտեմբերի 27–ին հայ–ադրբեջանական սահմանին սանձազերծված պատերազմի օրերին Ինստիտուտում մշտական հիմունքներով գործել են քաղպաշտպանության հանձնաժողովներ: Ինստիտուտի մի քանի տասնյակ աշխատակիցներ կամավորական ջոկատներով մեկնել են ռազմաճակատ մասնակցելու պատերազմական գործողություններին, իսկ դասախոսական կազմից ներկայացուցիչներ թիկունքում մասնակցել են հոգեբանական աջակցման, բժշկական վերականգնողական ծառայությունների տրամադրման աշխատանքներին:

Հաշվետու տարում ՀՖԿՍՊԻ-ում տեսանելի աշխատանքներ են կատարվել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և աշխատակիցների համար մատչելի և անվտանգ միջավայրի ապահովման համար: Բուհի գլխավոր շենքի մուտքն ունի թեքահարթակ, 2019 թ.-ին բացվել է նաև ներառական լսարան: Քայլեր են ձեռնարկվում ոչ միայն ֆիզիկական մատչելիության ապահովման ուղղությամբ, այլև, հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորությունը ներառական հասարակության կայացման հարցում, ջանքեր են ներդրվում ծրագրային և սոցիալական մատչելիության, ինչպես նաև ակադեմիական ներառականության ուղղությամբ. Ինստիտուտի անվտանգության ծառայության տեսահսկման բաժնի աշխատակիցներից երկուսը հատուկ կարիքներ ունեցող անձինք են:

### 4.4 Շրջանավարտների հետ տարվող աշխատանքներ. Մուտք աշխատաշուկա և կարիերայի զարգացում

2019-2020 ուսումնական տարում Պրակտիկայի և կարիերայի բաժինը գործուն քայլեր է ձեռնարկել ձևավորելու բուհի շրջանավարտների մասնագիտական զբաղվածության տվյալների բազա, վերանայվել են գործատուների և շրջանավարտների հետադարձ կապի ուսումնասիրման մեխանիզմներն ու գործիքակազմը, ինչը կօգնի հասկանալու և գնահատելու բուհում իրականացվող

մասնագիտական կրթության որակն ու կրթական ծրագրերի բովանդակության հուսալիությունը:

Ընդհանուր առմամբ՝ բաժինը դեռևս չունի ակտիվ դերակատարում ուսանողների մասնագիտական կողմնորոշման գործընթացում, թույլ է կապը շրջանավարտների հետ, դեռևս ձևավորված չէ բոլոր տարիների շրջանավարտների և նրանց զբաղվածության տվյալների բազա, ինչպես նաև գնահատված չէ բաժնի օժանդակությամբ շրջանավարտների՝ զբաղվածության և մասնագիտական ոլորտում ծառայունակության և դրա բարձրացմանն ուղղված քայլերի և միջոցառումների արդյունավետությունը:

Քանի որ բուհում համակարգված կերպով չեն իրականացվել շրջանավարտների զբաղվածության վերլուծություններ, հաշվետու տարում Պրակտիկայի և կարիերայի բաժինը նախաձեռնողականություն է ցուցաբերել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալներն հավաքագրել են ոչ ֆորմալ ճանապարհով՝ հիմնականում ամբիոններին արված հարցումների միջոցով:






***Գծապատկեր 21.***

**«Մենեջմենթ» և «Մարքեթինգ» մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանավարտների զբաղվածության մակարդակը**

Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ մասնագիտական ոլորտում շրջանավարտների զբաղվածության մակարդակը բավականին ցածր է, ինչն առաջին պլան է մղում ուսանողների կարիերայի զարգացմանը օժանդակելու բուհի հանձնառության կանորությունը:

Ուսանողների և ապագա շրջանավարտների հետ հաղորդակցական հոսքերը կառավարելու նպատակով ներդրվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգ: Ուսանողներին տրամադրված հասցեն պահպանվելու է նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի արդյունավետության բարձրացմանը:

Վերանայվում են գործատուների և շրջանավարտների հետադարձ կապի ուսումնասիրման մեխանիզմներն ու գործիքակազմը, ինչն կիր հերթին կօգնի ուսումնասիրելու և գնահատելու բուհում իրականացվող մասնագիտական կրթության որակն ու կրթական ծրագրերի բովանդակության հուսալիությունը:

Հաշվետու տարում բաժինը շարունակել է իր ֆեյսբուքյան էջով ուսանողներին իրազեկելու մասնագիտական աշխատաշուկայում առկա թափուր տեղերի մասին, կազմակերպել կլոր սեղան-քննարկումներ ոլորտի գործատուների հետ, որոնց կողմից բարձրաձայնված խնդիրները դիտարկվում են նաև ՄԿԾ-ների վերանայման ժամանակ:

Ուսանողական խորհրդի հետ համատեղ անցկացվել են առցանց դասընթացներ CV գրելու հմտությունների, աշխատաշուկային ճիշտ և շահեկան ձևով ներկայանալու վերաբերյալ, մասնագետները ուսանողներին գործնական խորհուրդներով ծանոթացրել են կարիերա սկսելու քայլերի հաջորդականությանը, տրամադրել գործնական առաջխաղացում ունենալու խորհրդատվություն:

***Ուսանողական խորհրդի գործունեությունը***

Հաշվետու տարում ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) պարբերաբար իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկող միջոցառումներ:

Ռազմահայրենասիրական միջոցառումների շրջանակում ՈՒԽ նախաձեռնությամբ ուսանողները այցելեն են Եռաբլուր պանթեոն հարգանքի տուրք մատուցելու Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին: Ակտիվացել են միջբուհական կապերը ուսանողական խորհուրդների հետ, համատեղ կազմակերպվել են ուսանողական բոուլինգի և բազկամարտի առաջնության խաղեր: ՈՒԽ հրավերքով Եվրոպական համալսարանի ուսանողները այցելել ՀՖԿՍՊԻ, Ինստիտուտի թանգարանում ծանոթացել բուհի 75-ամյա պատմությանը:

ՈՒԽ. «Բանավեճ-քննարկումների» ակումբի նախաձեռնած «Ֆիլմերը ժամանցի ավելի լավ տարբերակ են, քան գրքերը» խորագրով բանավեճ-քննարկումները մեծ հետաքրքրություն և աշխուժություն են առաջացրել ուսանողների շրջանում՝ գրքասեր ուսանողներին համախմբելով դասական և ժամանակակից գրականության բեսթսելերներին նվիրված քննարկումների սեղանի շուրջ:

Բուհում իրադարձային նշանակալի միջոցառում էր նաև «Տարվա 10 լավագույն մարզիկները» մրցանակաբաշխությունը:

Փետրվարի 19-ը՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, նշվում է որպես գիրք նվիրելու տոն: Այդ կապակցությամբ Ինստիտուտում անցկացվել է #նվիրիր_գիրք challenge ֆլեշ մոբը, որին միացել են բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողները և միմյանց նվիրել գրքեր: Այսօրինակ նախաձեռնությունները լուսաբանվել են բուհի և ՈՒԽ պաշտոնական ֆեյսբուքյան էջերի միջոցով՝ խրախուսելով ընթերցանության միջոցով ինքնազարգացումն ու գիտելիքների հարստացումը:

2019-2020 ուսումնական տարվա համար պլանավորված էին ՀՖԿՍՊԻ 75-ամյակին նվիրված ուսանողական լայնածավալ այլ միջոցառումներ, որոնց իրականացումը խաթարեցին համավարակի տարածումը կանխելու նպատակով գործող սահմանափակումները:

**4.5 Բուհ–գործատու համագործակցային կապերի զարգացում**

2020 թ.-ից Ինստիտուտը որդեգրել է գործատու ոլորտից դասախոսական կազմի ձևավորմանքաղաքականություն, ընդլայնվել են գործատու կառույցների հետ մասնագիտական պրակտիկայի անցկացման, աշխատաշուկայից հրավիրված մասնագետների հետ համատեղ մագիստրոսական ատենախոսության շրջանակում հետազոտական նախագիծ իրականացնելու հնարավորությունները՝ որպես միջոց գործատուի հետ շարունակաբար շփվելու, աշխատաշուկայի պահանջը ուսանողին հասցնելու, գործատուից եկած ազդակներին համապատասխան պրակտիկ կրթություն իրականացնելու համար:

Այս համագործակցության հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, ինչը փոխշահավետ կարող է լինել գործակցող կողմերի համար. որակյալ շրջանավարտն ապահովվում է աշխատանքով, ընկերությունն էլ համալրվում է պահանջված մասնագետով:

2019-2020 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ–ն նոր թափ է հաղորդել բուհ–գործատու համագործակցային կապերի սերտացմանը. ընդլայնվել է գործատու հաստատությունների և կառույցների գործակցային ծրագրերի շրջանակը: Հուշագրեր են ստորագրվել մի շարք գերատեսչությունների և գործընկեր կառույցների հետ, ինչպես օրինակ՝

- ✓ ՀՀ Արարատի մարզպետարան
- ✓ Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայություն
- ✓ Արցախի հանրապետության Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան
- ✓ ՀՀ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա,
- ✓ ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
- ✓ «Լոռե» փրկարարական ջոկատ

Ինստիտուտի բակալավրի և մագիստրոսի տարբեր կրթական ծրագրերի ուսումնառողների պրակտիկայի անցկացման նպատակով գործատու կառույցների հետ կնքվել է շուրջ 300 պայմանագիր:

Արտաքին շահակիցների հետ ինստիտուցիոնալ հարաբերություններ ձևավորելու նպատակով ՀՖԿՍՊԻ–ն պրոակտիվ ներդրում է ունեցել նաև բարձրագույն կրթության ոլորտային շրջանակի մշակման աշխատանքներին: ՀՀ մանկավարժական բուհերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի հետ համատեղ մշակվել է Որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈՇ) նախագծային տարբերակը և ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Նախագծում ՀՖԿՍՊԻ առաջարկները վերաբերել են ոչ միայն փաստաթղթի կառուցվածքին, վերջնարդյունքների ձևակերպման հիմնական բնութագրիչներին, այլև մշակվող փաստաթղթով ապագա մանկավարժի որակավորման հուսալիության ու արժանահավատության հավաստմանը: Բուհի կողմից ներկայացրած դիտարկումներն ու առաջարկությունները հիմնականում ընդունվել են և արտահայտվել ՈՈՇ-ի նախագծային տարբերակում:

Ինստիտուտը ԿԳՄՍՆ է ներկայացրել «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքի նախագծի, ՀՀ բարձարագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ հատկացնելու կարգի (ՀՀ կառավարության, 2006թ. թիվ 1183-ն որոշում) վերաբերյալ ՀՖԿՍՊԻ կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները: Նախարարություն է ներկայացվել նաև Սպորտի և ֆիզիկական ակտիվության 2021-2025թթ. պետական զարգացման ռազմավարական ծրագիրը

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5. ՈՐԱԿՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Որակյալ կառավարում և վարչարարություն» ռազմավարական նպատակով սահմանված է «կատարելագործել ինստիտուտի կազմակերպական կառուցվածքը և բարձրացնել կառավարման արդյունավետությունը»:

***5.1 Կառավարման և հաշվետվողականության համակարգի բարելավում***

2019-2020 թվականին կառավարման ուղղությամբ ՀՖԿՍՊԻ–ի գործունեությունը նպատակաուղղված էր Ինստիտուտի կառուցվածքի և վարչակառավարչական գործառույթների բարելավմանը:

2019թ.-ի դեկտեմբերին բուհում ներդրվել է կազմակերպական նոր կառուցվածք:

Մինչ հոգաբարձուների խորհդի քննարկմանը ներկայացնելը այն լայնորեն քննարկվել է ներքին շահակիցների շրջանում, ստացվել են հիմնավորված առաջարկություններ, որոնց մեծ մասը ընդունվել է:

Հոգաբարձուների խորհրդի կողմից հավանություն ստանալուց հետո Ինստիտուտը դիմել է դատարան նպատակների, շահառուների փոփոխությունը հաստատելու նպատակով:

Համաձայն կազմակերպական նոր կառուցվածքի՝ կառավարման օղակների միջև հաստատվել են հորիզոնական և ինտեգրալ կապեր, որոնք նախկինում մասնատված էին: Կառավարման հորիզոնական մակարդակում ամրապնդվել են վերահսկման, հաշվետվողականության գործառույթները, ամրագրվել են հակակշիռների և փոխզսպումների մեխանիզմները:

ՀՖԿՍՊԻ-ի որդեգրած քաղաքականությունը և վարչարարության ներկայիս գործունեությունը իրականացվում է որակի կառավարման (P-D-C-A cycle) (ՊԻԳԲ) փուլային մոդելի կիրառմամբ՝ համապատասխան ընթացակարգերով:

Հաշվետու տարում պլանավորվել և իրականացվել է արդյունավետ կառավարման համակարգի համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակում և հաստատում, ինչը համապատասխանում է որակի ապահովման կառավարման ՊԻԳԲ շրջափուլին:

2019-2020 ուսումնական տարում Ինստիտուտի կանոնադրությունը փոփոխվել է երկու անգամ: Կանոնադրական փոփոխությունները եղել են ինչպես իրավական, այնպես էլ բովանդակային:Կանոնադրության փոփոխությունները նպատակաուղղված են ընդլայնելու Ինստիտուտի կրթական, գիտական և հետազոտական գործունեության ոլորտները՝ համահունչ ժամանակակից կրթական, գիտահետազոտական արդի միտումներին:

Իրավական և տեխնիկական փոփոխությունների են ենթարկվել նաև Հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը և ռեկտորի ընտրության կանոնակարգը:

Բաժինը ներքին շահակիցների հետ համատեղ մշակել է ռազմավարական ծրագրի մշակման, մշատադիտարկման, գնահատման, վերանայման քաղաքականությունը և ընթացակարգը, որը կնպաստի 2022-2026թթ. ռազմավարության նոր ծրագրի մշակմանը:

Կազմակերպական նոր կառուցվածքով ստեղծված գիտահամակարգող խորհրդի անդամ-պատասխանատուների հետ համատեղ մշակվել է գիտահամակարգող խորհրդի ձևավորման և գործունեության ընթացակարգը, որը ներկայացվել է գիտական խորհրդի անդամներին կարծիքի և ստացված կարծիքների համադրումից հետո ներկայացվել Գիտական խորհրդի հաստատմանը և ընդունվել:

Ներքին շահակիցների հետ համատեղ մշակվել էվճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ, մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխահատուցման (փոխատեղման) և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականությունը և ընթացակարգը և հաստատվել գիտական խորհրդի կողմից:

Իրավական ապահովման բաժինը ներքին շահակիցների առաջարկությունների և կարծիքների հիման վրա վերանայել է բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը, որը հաստատվել է Գիտական խորհրդի նիստում: Վերանայվել ու հաստատվել են նաև ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգերը:

Իրավական ապահովման բաժինը ապահովում է նաև Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի աշխատանքների պատշաճ կազմակերպումը, նիստերի նախապատրաստումը ռեկտորի հետ համատեղ՝ համագործակցելով Խորհրդի նախագահի, անդամների և խորհրդի քարտուղարի հետ կազմում որոշումների նախագծերն ու վարում նիստերի արձանագրումը:

Հաշվետու տարում տեղի է ունեցել Խորհրդի թվով 2 նիստ, այդ թվում հարցման կարգով, առկա կամ հեռավար եղանակով, որոնց ընթացքում քննարկվել և հաստատվել են Ինստիտուտի նոր կառուցվածքը, հաստիքացուցակը, կանոնադրության փոփոխությունները, նոր խմբագրությամբ կանոնադրությունը, ռեկտորի ընտրության կանոնակարգի փոփոխությունները, խորհրդի աշխատակարգի փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունը, 2021թ. բյուջեյի նախահաշիվը:

Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը, որոշումների նախագծերի կազմումը, արձանագրությունների վարումը, դրանց հրապարկման տալը, շահագիգիռ կողմերին որոշումներին ծանոթացնելը 2020թ. հուլիս ամսից իրականացնում է բաժնի իրավախորհրդատուն՝ համագործակցելով ռեկտորի և գիտական քարտուղարի հետ:

Առկա կամ հեռավար ձևաչափով տեղի ունեցած ԳԽ նիստերին քննարկվել և հաստատվել են՝ Ինստիտուտի գործունեությունը կարգավորող կանոնակարգեր. մասնավորապես գիտահամակարգող խորհրդի ձևավորման և գործունեության

կանոնակարգը, ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, վերանայման քաղաքականության և ընթացակարգը, հաստատվել է գիտական խորհրդի նոր կազմը, Ինստիտուտի մի շարք շրջանավարտների շնորհվել է պատվավոր պրոֆեսորի կոչումներ, տպագրության են երաշխավորվել մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, հաստատվել է ավարտական քննությունների և ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունները: Վերանայվել է գիտական խորհրդում հարցերի ներկայացման ընթացակարգը:

2019-2020 ուսումնական տարում բուհի կառավարման համակարգում արված բարեփոխումները ի հայտ են բերում այն իրողությանը, որ Ինստիտուտը առավելապես գտնվել է վարչարարության իրականացման պլանավորման և իրականացման փուլերում, իսկ բոլորովին վերջերս ՊԻԳԲ շրջափուլը սկսել է իրականացվել նաև գնահատում և բարելավում փուլերով՝ համապատասխան ընթացակարգերով ՝ ինչպես օրինակ՝

***Օրինակ 1.*** 2019-2020 ուսումնական տարում վերանայվել են կրթական ծրագրերը, բարելավվել են ուսումնական պլանները՝ հիմնվելով արտաքին անկախ գնահատման արդյունքների, շահառուների դիտարկումների և համատեղ քննարկումների ժամանակ արտահայտված կարծիքների վրա:

2020 թ.-ին հաստատված «Մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման» ընթացակարգով սահմանված ժամանակահատվածում անցկացվել ու ամփոփել են արտաքին փորձագիտական մշտադիտարկումները, ընդհանրացվել են փորձագիտական կարծիքների հիման վրա արված գնահատումները, որոնք նպաստել են կրթական ծրագրի վերափոխումների նպատակայնությանը: Արտաքին գնահատման են տրամադրվել բակալավրի երեք մասնագիտությունների կրթական ծրագրերը և մագիստրատուրայի չորս մասնագիտությունների կրթական ծրագրերը:

Արտաքին գնահատող-փորձագետների հետ հանդիպում-քննարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտաքին շահակիցների դիտարկումները հիմնականում վերաբերում են բուհական կրթությունը աշխատաշուկայի այժմյան պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությանը.գործատուների առաջարկները հաշվի են առնվել կրթական ծրագրերի վերափոխումներում՝ ավելացնելով գործնական առաջադրանքների բաղադրիչը, զարգացնելով նախագծային ուսուցման մեթոդաբանությունը:

***Օրինակ 2.*** «Որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետության մշտադիտարկման» և «ՀՖԿՍՊի ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածության ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատման» արդյունքների կիրառումը ինստիտուցիոնալ բարելավման գործողությունների պլանավորման գործընթացում:

***Օրինակ 3.*** Կրթական ծրագրի պատասխանատուները որդեգրելով պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում սկզբունքը բոլոր

գործընթացների համար՝ նույն մոտեցումն են կիրառել նաև ՄԿԾ-ի արտաքին շահակիցների ներգրավման աշխատանքներում՝ մասնավորապես՝

3.1 Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների վերջին չորս տարիների (2016-2020 ուստարիներ) հաշվետվությունները, նրանց բարելավմանն ուղղված առաջարկությունները և դրանց հիման վրա համապատասխան ստորաբաժանումների, պատասխանատու մարմինների իրականացրած բարելավումները:

3.2 Մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության կարծիքների վերլուծությունները:

3.3 Պրակտիկայի և կարիերայի բաժնի և արտաքին շահակիցների հետ համագործակցության արդյունավետության վերաբերյալ վերլուծություններ:

***Օրինակ 4***. 2019-2020 ուսումնական տարում «Բաց հասարակություն հիմնադրամներ»-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացվել է ՀՖԿՍՊԻ «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի անկախ փորձագիտական գնահատում: Վերլուծական զեկույցում հետազոտվել է ՄԿԾ որակի կառավարման ողջ հենքը, ուսանողների, շրջանավարտների, դասախոսական կազմի, գործատուների հետ անցկացված ֆոկուս խմբային հետազոտությունների արդյունքում դուրս են բերվել հիմնական խնդիրները, վերանայումների առանցքային տիրույթները՝ ներկայացնելով ՄԿԾ որակի բարելավման առաջարկություններ և երաշխավորություններ:

Մարզական լրագրության ամբիոնի հետ ակտիվ համագործակցությամբ քննարկվել են ինքնագնահատման զեկույցում արված առաջարկությունները, որոնք հիմնականում հաշվի են առնվել առարկայացանկի վերամշակման, ամբիոնի դասախոսական կազմը պրակտիկ լրագրողներով համալրելու, հետազոտահեն կրթական միջավայր ձևավորելու աշխատանքներում:

***Օրինակ 4.*** ՀՖԿՍՊԻ դասախոսի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները խթանելու հավելավճարի տարբերակված համակարգի ներդնումը՝ հաստատված 2020 թ.-ի օգոստոսի 31 ռեկտորի № 443-Լ հրամանով: Համակարգի կիրառման արդյունքում նկատելիորեն ավելացել է միջազգային վարկանշային բարձր գործակից ունեցող ամսագրերում բուհի աշխատակիցների հրապարակումների թիվը՝ ընդհանուր 12 հոդված նախկին եզակի հրատարակությունների փոխարեն:

**5.2 Հետադարձ կապի մշակույթի ձևավորում.** ներքին շահակիցների հետ հարցումների իրականացում, վերհանված խնդիրների հետևողական լուծում, հետադարձ կապի հիման վրա բարելավումների/բարեփոխումների նախագծում, որոշումների կայացման հիմնավորվածության ամրագրում:

ՀՖԿՍՊԻ-ում հետադարձ կապի ապահովման մեխանիզմ է դիտարկվում ներքին և արտաքին շահակիցների հետ հարցումների անցկացումը, որը կանոնակարգվել է 2017 թ.-ին, սակայն հետադարձ կապի ուսումնասիրման առաջին

հետազոտությունները արվել են միայն 2019 թ.-ին Ինստիտուտի Որակի ապահովման բաժնի կողմից:

Մինչ 2019-2020 թ.թ. բուհում կանոնավոր կերպով և պարբերաբար չեն իրականացվել ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի հարցումներ, իսկ որոշ դեպքերում՝ տվյալներ հավաքագրվել են, սակայն չեն վերլուծվել: Արդյունքում վավեր գործիքակազմով բացահայտված չեն շահակիցների բուն կարիքները, հետևաբար տեսանելի չեն այդ կարիքների ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների արդյունքները:

ՈԱԲ նախաձեռնությամբ 2019-2020 թ.թ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների ուսանողների շրջանում իրականացվել են դասընթացի որակի ապահովման, ռեսուրսներից և ծառայություններից ուսանողների բավարարվածության, ՊԴ կազմի կարիքների գնահատման հարցումներ, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումներ են անցկացվել հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ:

Ուսանողների կողմից ստացված կարծիքներն ու արձագանքները համարելով որակի ապահովման բարելավման կարևորագույն բաղադրիչներից մեկը, այսուհետ շարունակաբար իրականացվող հարցումները կօգնեն ոչ միայն ի հայտ բերել առկա խնդիրներն ու թերությունները, այլև կրթության որակի բարելավմանն ուղղված ծրագրերն դարձնել արդյունավետ:

Հետադարձ կապի հիման վրա իրականացված աշխատանքների արդյունքում բուհում աստիճանաբար ձևավորվում է ամբիոններում և ֆակուլտետներում ուսանողական հարցման արդյունքների քննարկման պրակտիկան, որը նպատակաուղղված է ապահովելու կրթական գործընթացի վրա ուսանողական հարցման արդյունքների ազդեցության թափանցիկությունն ու դրանց հիման վրա իրականացվող բարելավումների կանխատեսելիությունն ու նպատակայնությունը: [8]

ՈԱԲ կողմից պարբերաբար ԳԽ նիստերում ներկայացվել են իրականացված հարցումների արդյունքների վերլուծությամբ վերհանված խնդիրները, դրանց արձագանքման և բարելավումների ծրագրերի պլանավորման հարցերը:

Նշենք, որ ռեսուրսային միջավայրի վերաբերյալ ուսանողական հարցումները իրականացվել են 2019-2020 ուստարվա դեկտեմբերին՝ մինչ ՀՖԿՍՊԻ-ի կազմակերպական նոր կառուցվածքի հաստատումը և չեն արտացոլում բուհի նոր ղեկավար կազմի իրականացրած փոփոխությունների ազդեցությունները, որոնք կգնահատվեն հերթական հետազոտություններում:

Հեռավար տեսահանդիպումների ձևաչափով քննարկվել են ուսանողների և դասախոսների շրջանում ՈԱԲ-ի կողմից իրականացրած բոլոր հարցումների արդյունքները՝ առանձնացնելով հարցումների արդյունքում վերհանված խնդիրների

[8] https://drive.google.com/drive/folders/15uT260PA8ITCezoTEIB3JQTOeX_fGmgy

լուծման հնարավորությունները, ինչպես նաև՝ կարևորելով շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման շրջափուլում:

Իրականացված հարցումների արդյունքները օգտագործվել են դասախոսական անձնակազմի համալրման, ռեսուրսային միջավայրի բարելավման, կրթական ծրագրերում փոփոխությունների իրականացման համար՝ ձգտելով երաշխավորել, որ ուսանողների ձայնը լսելի է, ինչպես նաև հավաստել՝ ամենից առաջ ուսանողն է լինելու իրականացվող բարեփոխումների կրողը:

Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել են հարցումների ընթացակարգերն ու գործիքակազմը, վերամշակել են հարցաթերթիկները՝ նախատեսելով նաև առցանց հարցումների անցկացման ձևաչափը: Փաստաթղթերը քննարկվել են ներքին շահակիցների հետ, ստացված առաջարկությունների որոշ մասը ընդունվել է և ներկայացվել է ԳԽ հաստատմանը:

Արդյունքում՝ ՈԱԲ-ի կողմից կազմվել, լրամշակվել և ԳԽ նիստում (27.11.2020) հաստատվել են հետևյալ կանոնակարգերն ու դրանց կից հարցաթերթերը.

- ✓ «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման և արդյունքների օգտագործման» կանոնակարգ
- ✓ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ներքին շահակիցների կարիքների վերհանման և արդյունքների օգտագործման» կանոնակարգ՝ 6 տարբերակված հարցաթերթերով:

Վերանայման և մշակման փուլում են հարցումների անցկացման բոլոր կանոնակարգերը, ստեղծվում են արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ: Ընթացքի մեջ են նաև ուսանողի գիտելիքի և կարողությունների գնահատման գործող համակարգի վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցումների կանոնակարգման աշխատանքները:

### 5.3 Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային կառավարում

ՀՖԿՍՊԻ ՏՏ ներուժի և տեղեկատվական անվտանգ համակարգի գործարկումը ինստիտուտի 2016-2020 ՌԾ–ով սահմանված նպատակներից է, սակայն ներքին տեղեկատվության կայուն և անխափան կապուղիների ներդրման և տեխնիկական հագեցվածության վերազինման համար պատասխանատու ստորաբաժանում Ինստիտուտում գործում միայն 2019 թ. -ից:

Կազմակերպական նոր կառուցվածքով ստեղծված Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը զգալիորեն բարելավել է Ինստիտուտի տեղեկատվական և համակարգչային ցանցը՝ իր ծավալներով, գործառույթներով և որակական բնութագրերով:

2019 թվականին սկսվել է ՀՖԿՍՊԻ ինտեգրումը «G Suite» համակարգին, որը թույլ է տալիս ընդլայնել էլեկտրոնային հաղորդակցության առցանց

գործիքակազմը՝ մասնավորապես՝ գերարագ, արդի և կենտրոնացված կերպով կառավարվող էլեկտրոնային նամակագրության համակարգ:

Հաշվետու ժամանակահատվածում էապես փոխվել է ՀՖԿՍՊԻ ներքին համակարգչային օպտիկամանրաթելային ցանցի կառուցվածքը: Մասնաշենքերում տեղադրվել են ցանցի համակցման նոր սերնդի սարքավորումներ, որի արդյունքում մասնաշենքերում սփռվող ինտերնետի թողունակությունը հասել է մինչև 100 Մբիթ/վ:

Աշխատանքներ են տարվել նաև Wi-Fi ցանցի ընդլայնման ուղղությամբ, հին սարքավորումները հիմնականում փոխարինվել են նոր սերնդի սարքավորումներով, բարելավվել է Wi-Fi ցանցով սփռվող ինտերնետի արագությունը, արդիականացվել է ներբուհական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը:

Համակարգչային բազան համալրվել է նոր 64 համակարգիչներով և տեխնիկական անհրաժեշտ սարքավորումներով հեռավար ուսուցման գործընթացը անխափան կազմակերպելու համար: Ստեղծվել է էլեկտրոնային ֆայլերը ամպային կերպով պահպանվող տիրույթ, որը թույլ է տալիս աշխատակիցներին աշխատել սինխրոն և ասինխրոն ռեժիմով՝ բացառելով ֆայլերի պատահական կորուստները:

Ներդրվել է «Google Meet» օնլայն կոնֆերանսների համակարգը՝ անսահմանափակ քանակով առցանց դասեր, քննություններ և կոնֆերանսներ անցկացնելու հնարավորությամբ:

Իրականացվում են «G Suite for Education» տեղեկատվության կառավարման բազմաֆունկցիոնալ ցանցային համակարգի (համակարգի մշակումը սկսվել է 2019 թ.–ին) զարգացման աշխատանքները, որոնք հնարավորություն կտան թվայնացնել ուսումնական գործընթացի բոլոր փուլերին վերաբերող տեղեկատվությունը ու երաշխավորել դրանց անվտանգությունը, ստեղծել ուսանողների ակադեմիական տվյալների և կրթական առաջընթացի էլեկտրոնային բազա՝ միաժամանակ խուսափելով մարդկային գործոնի հետ կապված սխալներից, բարձրացնել աշխատանքի արագությունն ու որակը:

Նախատեսվում է համակարգը կիրառել ուսումնական գործընթացին առնչվող տվյալների և տեղեկատվության կառավարման արդյունավետությունը բարձացնելու նպատակով՝ ներառելով հետևյալ փուլերը՝

- ✓ ուսանողների և դասախոսների հաշվառում,
- ✓ ուսանողների շարժի կառավարում և վերահսկում,
- ✓ ուսումնական պլանների և դասացուցակների համապատասխանություն
- ✓ քննության արդյունքների ավտոմատ գրանցում,
- ✓ ուսանողի առաջադիմության հաշվարկ և վերահսկում,

Կարգավորման փուլում է գտնվում «Google Classroom» առցանց ուսուցման հարթակը:

Ներկայումս բոլոր աշխատակիցները և ուսանողներն ունեն էլ. փոստի հասցեներ: Էլեկտրոնային ծառայությունները կարգավորվել են այնպես, որ առավելապես ավտոմատացվեն փաստաթղթաշրջանության գործառույթները:

Առցանց դասապրոցեսի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել ամբիոններին: Հետևաբար թվով 14 առանձին թրեյնինգ է անցկացվել ամբիոնների համար, որոնց մասնակցել է 145 աշխատակից:

**5.4 Ներքին հաղորդակցության արդյունավետության բարձրացում էլեկտրոնային կառավարման միջոցով**

ՀՖԿՍՊԻ-ի ներքին շահակիցների կարծիքն ու վերաբերմունքը բուհի նկատմամբ ինքնին շատ կարևոր գործոններ են և մեծապես ազդում են հանրային կարծիքի ձևավորման վրա:

2019 թ-ին ՀՖԿՍՊԻ-ում մշակվել և ներդրվել է հանրային կապերի հայեցակարգը, որի 7–րդ կետը վերաբերում է բուհի ներքին հաղորդակցության ապահովմանը: Մշակման փուլում են հանրային կապերի քաղաքականությանն ու ընթացակարգին առնչվող փաստաթղթերը:

ՀՖԿՍՊԻ-ում դեռևս բացակայում են գործընթացների թափանցիկության և հասանելիության ապահովման գործիքների արդյունավետության վերլուծման մեխանիզմները:

Տեղեկատվության տարածումն ու հասանելիությունը ներքին շահակիցների շրջանում ապահովվում է ներքին մեյլինգի միջոցով, հրապարակման ենթակա փաստաթղթերը տեղադրված են պաշտոնական կայքէջում (www.sportedu.am/փաստաթղթեր):

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման նպատակով կիրառվում էMulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Նախատեսվում է ներքին հաղորդակցումը ևս ապահովել Mulberry համակարգի միջոցով:

ՀՖԿՍՊԻ-ում գործում են հասարակության լայն շերտերից հետադարձ կապի ստացման օնլայն մեխանիզմներ:

Տեղեկատվության տարածման կարևոր միջոցներից են ՀՖԿՍՊԻ կայքն ու ֆեյսբուքյան էջերը: 2019 թ. –ին ներքին շահակիցների հետ իրականացված հարցումների արդյունքներից պարզ է դառնում, որ դասախոսական կազմն ու մասնավորապես ուսանողները բուհի ֆեյսբուքյան էջի միջոցով են տեղեկանում իրենց հետաքրքրող հարցերի մասին:




***Գծապատկեր 22***

*ՀՖԿՍՊԻ կայքը և ֆեյսբուքյան պաշտոնական էջը՝ որպես տեղեկատվության ստացման միջոց*

Սոցցանցերի միջոցով ուսանողները, դասախոսները, գործատուները, դիմորդները և շրջանավարտները, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր են ուղղում, պատասխաններ ստանում՝ օրինակ՝ արտակարգ դրության պայմաններում 2020-2021 ուսումնական տարվա դիմորդների կողմից ստացված 1212 նամակներին տրվել է արագահաս և սպառիչ պատասխան:

ՀՖԿՍՊԻ-ն նախաձեռնել է նաև Ինստիտուտի պաշտոնական նոր կայքի մշակման գործընթացը՝ դրա բնականոն գործունեության ապահովմամբ, ինչպես նաև տեխնիկական սպասարկման իրականացմամբ:

Նոր կայքում նախատեսվում էհաշվետվությունները տեղադրել հատուկ փաստաթղթերի համար ստեղծված բաժնում doc.sportedu.am, որն ապահովելու է բուհի հիմնական փաստաթղթերի հասանելիությունը: Կայքում տեղադրված կլինեն ոչ միայն հաշվետվությունները, այլև բոլոր կանոնադրություններն ու կանոնակարգերը, բուհի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների նիստերի արձանագրություններն ու ՀՖԿՍՊԻ ռեկտորի հրամանները: Իսկ կրթական փաստաթղթերը (կրթական ծրագրեր, առարկայական նկարագրեր, ուղեցույցներ, կարգեր և այլն) տեղադրված կլինեն edu.sportedu.am հատվածում՝ ուսանողների և համապատասխան թիրախային խմբի համար նախատեսված փաստաթղթերն ավելի մատչելի դարձնելու համար:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական պատասխանատվություն» ռազմավարական նպատակով սահմանված է «զարգացնել հասարակության հետ կապերն ու հանրային ներգրավման ծառայությունների համակարգը, բարձրացնել սոցիալական պատասխանատվությունը»:

Հասարակայնության հետ կապերի ինստիտուտը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում ներդրվել է 2020թ.-ի փետրվարից: Հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հիմնական գործառույթն է բուհ-հասարակություն տեղեկատվական հոսքերի ապահովումն ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատումը (լրագրողների հետ աշխատանք, տեղեկատվության տրամադրման հարցումների պատշաճ պատասխաններ, ինտերնետային ռեսուրսների զարգացում, աշխատանք ՀԿ-ների, այլ բուհերի, պետական և մասնավոր կազմակերպությունների հետ):

PR պատասխանատուի աշխատանքը միտված է նպաստելու բուհում թափանցիկության և հրապարակայնության ապահովման գործընթացին:

ՀՖԿՍՊԻ ընթացակարգերի և գործողությունների թափանցիկության ու հասանելիության մեխանիզմները սահմանված են PR պատասխանատուի գործունեության հայեցակարգով:

Հաշվետու ժամանակահատվածում հասարակայնության հետ տարվող աշխատանքներն իրականացվել են մի շարք ուղղություններով՝ մասնավորապես՝

- ✓ Հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում:
- ✓ Հայաստանյան ԶԼՄ-ների հետ (էլեկտրոնային) փոխգործակցություն, ՀՖԿՍՊԻ միջոցառումների լուսաբանում:
- ✓ Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում բուհի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում:
- ✓ Միջոցառումների ֆոտո և տեսանկարահանում, նյութերի արխիվացում:

Բուհի «Փի Ար» գործունեության հանրայնացմանն ուղղված մարքեթինգային գործողությունների շարքը ծավալուն է և բազմաբնույթ, որը ներառում է.

**7.1 Գովազդային արշավների կազմակերպում**

2020 թվականի հունվարին անցկացված հարցումների արդյունքներով ՀՖԿՍՊԻ-ն խնդիր ունի ներկայանալու որպես կայացած կրթօջախ, ուստի գովազդային արշավների կարիք կա, քանի որ բուհերի միջև մրցակցությունը գնալով թեժանում է, բուհի հեղինակությունն էլ հանրության շրջանում անհրաժեշտ է բարձրացնել, պահպանել ու զարգացնել: Հետևաբար ՀՖԿՍՊԻ հասարակայնության հետ կապերի աշխատակիցների կողմից պատրաստվել են գովազդային տեսահոլովակ dimord.am կայքի համար, ռադիո գովազդային հոլովակ, որը հեռարձակվել է հանրային ռադիոյով և թվով 5 տեսահոլովակներ, որոնք տեղադրված են բուհի ֆեյսբուքյան էջում: Գովազդային արշավներ են իրականացվել ‹‹Արի ՀՖԿՍՊԻ›› և ‹‹Մենք 75 տարեկան ենք›› խորագրերով՝ պաստառների տեսքով :

**7.2 Աշխատանքներ դիմորդների հետ**

ՀՖԿՍՊԻ–ն, ինչպես նաև յուրաքանչյուր կրթական հաստատություն, չի կարող գոյատևել առանց դիմորդների և ուսանողների: Հաշվետու ժամանակահատվածում դիմորդների հետ աշխատանքները ՀՖԿՍՊԻ «Փի Ար» գործունեության գերակա ուղղություններից է եղել, և այդ աշխատանքներն իրականացվել են հաշվի առնելով «Փի Ար» աշխատանքների արդի մարտահրավերները:

Այս առումով արտակարգ դրության պայմաններում դիմորդների հետ աշխատանքը տեղափոխվել է վիրտուալ տիրույթ՝ տեսահոլովակների միջոցով ներկայացվել են ինչպե լրացնել դիմումի հայտերը, պարզաբանվել են ընդունելության կարգն ու բննական նորմատիվները:

**7.3 Ներկայացվածությունը համացանցում**

Ներկայումս համացանցում ներկայացվածության աստիճանը ժամանակակից լինելու, ժամանակին համընթաց շարժվելու ցուցանիշ է: Նշենք, որ բուհի «Փի Ար» գործունեությունը կազմակերպելիս ավելացնել է կառուցի ներկայությունը ֆեյսբուք սոցիալական ցանցում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՖԿՍՊԻ-ն բավականաչափ լավ է ներկայացված եղել ամենատարածված սոցիալական ցանցում՝ facebook-ում: Սոցցանցերի միջոցով ուսանողները, դասախոսները, գործատուները, դիմորդները և շրջանավարտները, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր են ուղղել, պատասխաններ ստացել, վարկանիշեր տվել, ինչպես նաև ՀՖԿՍՊԻ գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ կարծիքներ արտահայտել:

Բուհում տեղի ունեցող բոլոր միջոցառումները լուսաբանվել են ՀՖԿՍՊԻ ֆեյսբուքյան էջում, և մշավել, արխիվացվել են պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնի համար: Բուհի ֆեյսբուքյան պաշտոնական էջի ակտիվությաան մասին են փաստում ավելացող հետևորդների և մեկնաբանությունների քանակը. հետևորդների թիվը՝ 7156, նամակների թիվը՝ 1 տարվա կտրվածքով 1922:

2020թ.-ի փետրվարից ստեղծվել և գործում է ռեկտորի ֆեյսբուքյան պաշտոնական էջը:

**7.4 ԶԼՄ-ների հետ տարվող աշխատանքներ**

ՀՖԿՍՊԻ-ն որդեգրել է լրագրողների հետ սերտ համագործակցության, նրանց մասնագիտական գործունեությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու քաղաքականություն: Նույն արհեստավարժ մոտեցումն է ցուցաբերվում նաև քաղաքացիների դիմում-նամակների պատասխաններին, որոնք տրվում են տեղեկատվության ազատության մասին օրենքի պահանջների համաձայն:

ԶԼՄ-ների հետ աշխատանքների բարելավման նպատակով, հաշվետու ժամանակաշրջանում ստեղծվել է ԶԼՄ էլեկտրոնային հասցեների արխիվ, մշակվել է մամուլի հաղորդագրության ձևաչափ, կապեր են հաստատվել նոր ձևավորված զանգվածային լրատվամիջոցների հետ, ամրապնդվել են հին կապերը: Իրականացվել է էլեկտրոնային կայքերում ՀՖԿՍՊԻ-ի մասին նյութերի ամենօրյա մոնիթորինգ, արխիվացվել են լրատվամիջոցներում բուհի մասին հրապարակված ու հեռարձակված նյութերը:

Նախատեսվում է մշակել «ՀՖԿՍՊԻ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ը, որը համեմատաբար կհամակարգի ԶԼՄ- ների հետ աշխատանքների կազմակերպումը:

**7.5 Կրթական գործընթացի մասին տեղեկատվության տրամադրում.**

ՀՖԿՍՊԻ-ը 2007թ.-ից անցում է կատարել ուսումնառության կրեդիտային համակարգին, որը Բոլոնիայի գործընթացի բաղադրիչներից է: Այս տիրույթում

անհրաժեշտություն կա հանրային լայն շրջանակների համար կրեդիտային համակարգի վերաբերյալ տեղեկատվությունն ավելի մատչելի դարձնել: Բացի այդ՝ պահանջ կա էլ ավելի մատչելի դարձնել ուսումնառության համար անհրաժեշտ հարակից տեղեկատվությունն ուսման վարձերի և հնարավոր զեղչերի, ուսման նպաստ տրամադրող հիմնադրամների, տեղեկատվություն ստանալու բոլոր հնարավոր աղբյուրների, միջազգային համագործակցության, բուհի և գործող ստորաբաժանումների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ իրականացվել է տեղեկատվական բուկլետի մշակում (եռալեզու), տեղեկատվական շրջանակի հանրայնացում, միջոցառումների լուսա-տեսանկարահանում:Ֆեյսբուքյան պաշտոնական էջում իրականացվել է արշավ՝ ‹‹Մերոնք›› խորագրով:

7.6 **Գիտական ներուժի ներկայացում**

ՀՖԿՍՊԻ-ը, որպես սպորտի ոլորտի միակը բուհը ՀՀ ողջ տարածքում, ձգտում է պահպանել իր հեղինակությունը սեփական գիտահետազոտական ներուժի, ինչպես նաև աշխատող ու դասավանդող անվանի գիտնականների, մարզիչների ու մարզիկների շնորհիվ: ՀՖԿՍՊԻ-ն առաքելություն ունի գովազդել գիտությունն ու կրթությունը և սպորտը, ֆիզիկական կուլտուրան, առողջ ապրելակերպը: Այս նպատակով բուհի ներկայացուցիչները հարցազրույցներով են հանդես եկել տարբեր ԶԼՄ-ներում և բուհի ֆեյսբուքյան էջում, լայնորեն լուսաբանվել է ‹‹Առողջ ապրելակերպ›› խորագրով արշավը:

Բավականին արդյունավետ ձևաչափ էր նաև ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դ.Խիթարյանի՝ մամուլի ասուլիսով միջոցով տարեկան գործունեության ամփոփումը, որի ընթացքում հնչել են 30 և ավելի հարցեր տարբեր լրատվամիջոցների և հասարակության կողմից:

**7.7 Բուհի ներկայանալիության ապահովման և ռեբրենդինգի գործընթաց**

Կորպորատիվ ոճը ինչպես ցանկացած կազմակերպության տեսանկյունից, այնպես էլ կրթական հաստատությունների համար շատ կարևոր է: Նոր բրենդ, նոր դեմք, կրթական նոր բովանդակություն և սպասված բարեփոխումներ. այս կարգախոսով է բուհը մեկնարկել ռեբրենդինգի գործընթացը:

2020թ. փետրվարից ՀՖԿՍՊԻ-ն նախաձեռնել է ռեբրենդինգի գործընթացը և ներկայացել նոր լոգոյով ու նոր դեմքով: Նոր բրենդի ստեղծման ընթացքում իրականացվել է բենչմարքինգ. ուսումնասիրվել են 50-ից ավելի կայացած բրենդներ:

Տեղի են ունեցել թվով 7 համատեղ քննարկումներ PR տիրույթի ներկայացուցիչների հետ: ՀՖԿՍՊԻ նոր տարբերանշանի և կորպորատիվ ոճի վերամշակման համար իրականացվել է միջազգային պրակտիկայում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտների տարբերանշանների վիզուալ հաղորդակցության սիմվոլիկ հիմքերի հետազոտություն: Արդյունքում մշակվել են տարբերանշանը և թվով 37 բրենդի ատրիբուտներ:

**7.8 Հանրային կարծիքի ուսումնասիրություններ.**

ՀՖԿՍՊԻ-ի հասարակայնության հետ կապերի պատասխանատուի կողմից իրականացվել է հանրային կարծիքի ուսումնասիրմանն ուղղված հետազոտություններ՝ մասնավորապես որոշ հարցումներ դիմորդների շրջանում:




**Գծապատկեր 23**
**Առաջինը ի՞նչ է Ձեր մտքով անցնում, երբ լսում եք Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ**

Հարկ է նշել, որ հետազոտությունների դաշտը աստիճանաբար ընդլայնվում է՝ որպես ուսումնասիրության թիրախ ընտրելով շրջանավարտներին, տարբեր տարիքի, սոցիալական դիրք ունեցող անձանց, գործընկերներին, երկրի մարզական տիրույթը ներկայացնող անձանց:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 8.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

«Արտաքին կապեր և միջազգայնացում» ռազմավարական նպատակով սահմանված է «խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում»:

2016թ. –ից ՀՖԿՍՊԻ–ում գործել է Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնը, որի հիմքի վրա 2019թ.-ի դեկտեմբերին վերակազմակերպվել է Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը (այսուհետ՝ ՄՀԶԾ), համակարգվելով Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորի կողմից:

ՀՖԿՍՊԻ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 30 երկրների 40 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց շարքում են՝ Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, տուրիզմի պետական համալսարանը (Ռուսաստան), Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ակադեմիան (Ուկրաինա), Ֆիզիկական դաստիարակության և սպորտի պետական համալսարանը (Վրաստան), Պեկինի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարանը (Չինաստան), Բելգիայի Թոմաս Մուրի համալսարանական քոլեջը (Բելգիայի Թագավորություն):

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համալսարանների միջազգային ասոցիացիայի անդամ է (շուրջ 52 համալսարան):

Միջազգայնացման տեսանկյունից կարևոր է նաև տարբեր դեսպանատների, միջազգային պատվիրակությունների, արտասահմանյան գիտնականների և դասախոսների մասնավոր այցերի կազմակերպումը:

Կնքված երկկողմ համաձայնագրերի շրջանակում կողմերը աջակցում են.

- ✓ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի զարգացմանը,
- ✓ Դասախոսների, ուսանող-մարզիկների, հետազոտողների համատեղ ուսումնագիտական, մարզական, ֆիզկուլտուրային առողջարարական ծրագրերի իրականացմանը:
- ✓ Փորձի փոխանակման, գիտահետազոտական գործունեության արդյունքների վավերացմանը. Ինստիտուտն կազմակերպում է ամենամյա հանրապետական և միջազգային գիտաժողովներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ–հոգեբանական, բժշկակենսաբանական, մանկավարժական, պատմամշակութային թեմաներով, որին մասնակցում են արտերկրների մասնագետներ ու մարզիկ ուսանողներ:

Ինստիտուտը համագործակցում է՝

- ✓ ԱՊՀ առաջատար ֆիզկուլտուրային-մարզական ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհուրդի հետ:
- ✓ Կենտրոնական Ասիայում և Եվրոպայում «Օլիմպիական Սպորտ և Սպորտ բոլորի համար» մարզական և ուսումնական բարձրագույն կրթական հաստատությունների միջազգային և ազգային գլոբալ կոնֆեդերացիայի հետ:
- ✓ Աշխարհի սպորտային առաջատար համալսարանների ասոցիացիայի լիիրավ անդամ է:
- ✓ Ինստիտուտից Միջազգային Օլիմպիական Ակադեմիայի (ՄՕԱ) ամենամյա նստաշրջանների մասնակցություն են ունենում դասախոսներ, երիտասարդ մասնակիցներ: Արդյունքում՝ իրենց գործունեությունն են ծավալում ՀՀ-ում Օլիմպիական գաղափարների տարածման ուղղությամբ, տպագրվում են ՄՕԱ-ի պարբերականում :

Թեև Ինստիտուտը տարիների ընթացքում կնքել է երկկողմ և բազմակողմ համագործակցության մի շարք պայմանագրեր, սակայն դրանք որոշ դեպքերում կրում են դեկլարատիվ բնույթ, ուսումնասիրված և վերլուծված չեն համագործակցության շոշափելի ձեռքբերումները:

2019-2020 ուսումնական տարում միջազգայնացման և արտաքին կապերի հաստատագրմանը միտված պայմանագրերի և հուշագրերի վավերացման գործընթացում հաշվի են առնված գործընկեր հաստատության առանձնահատկությունները, պայմանագրի բովանդակությունը համահնչեցված է համագործակցային ծրագրի նպատակներին և խնդիրներին՝ մասնավորապես շեշտը դնելով պայմանագրի շրջանակում կողմերի ամրագրված պարտականությունների, ակնկալվող արդյունքների, կոնկրետ գործողությունների և արդյունավետության գնահատման ցուցիչների վրա:

2019-2020 թ.թ. ընդլայնվել է համագործակից երկրների աշխարհագրությունը՝ ներառելով ԱՄՆ-ն (Աթլետիկ Թերապիայի Աշխարհի ֆեդերացիա, Սպորտային բժշկության հայ-ամերիկյան կոալիցիա), Հնդկաստանը (SPAA India, Amity University):

Կնքվել է համագործակցային 17 պայմանագիր: Համավարակի բռնկման հետևանքով միջազգային գործընկերների և գիտական շրջանակների հետ շփումներն ու համագործակցությունը իրականացվել է հիմնականում հեռավար ձևաչափով՝ ապահովելով նաև սովորողների և բուհի երիտասարդ աշխատակիցների ակտիվ մասնակցությունը միջազգային տեսակոնֆերասներին:

Եռակողմ հուշագրով հիմք է դրվել Հայ-ամերիկյան սպորտային բժշկության կոալիցիայի և Կանադայի Աթլետիկ մարզումների և թերապիայի աշխարհի ֆեդերացիայի հետ համագործակցությանը, որի շրջանակում նախատեսվում են իրականացնել փորձի ուսումնասիրման և փոխանակման փոխայցելություններ, մշակել և իրականացնել կրկնակի դիպլոմով կրթական ծրագրեր:

Դիտարկվող ժամանակահատվածում շոշափելի են Հնդկաստանի SPAA INDIA սպորտային ակադեմիայի հետ համատեղ իրականացրած աշխատանքների

արդյունքները: Հնդկաստանի հետ համագործակցային կապերի հիմքը դրվել է 2019 թ.-ի սեպտեմբերի 20-25-ը Մարզական լրագրության ամբիոնի դասախոսների և մի խումբ ուսանողների Հնդկաստան կատարած փորձի փոխանակման այցի, SPORT 2019 գիտաժողով-փառատոնի շրջանակում[9]:

Միջազգային գիտաժողովի և համագործակցային ծրագրի արդյունքներն ու ձեռքբերված փորձը դասախոսական կազմին, ուսանողներին ներկայացվել է տեղեկատվական հանդիպումների միջոցով, հաշվետվությամբ ամփոփվել գիտխորհրդում:

Ուսանողական և դասախոսական շարժունության ծրագրերի իրականացման համագործակցային կապեր են ստեղծվել նաև Դելիի հեղինակավոր MIET սպորտի մենեջմենթի համալսարանի և SPAA INDIA սպորտային ակադեմիայի հետ:

Համավարակի բռնկման հետևանքով ծրագրի իրականացումը վերապլանավորվել է 2020-2021 ուսումնական տարվա, փոխարենը բարեհաջող կերպով մեկնարկել է «Ֆուտբոլ» մասնագիտության հեռավար ուսուցման կազմակերպման պիլոտային ծրագիրը:

Ընդհանուր առմամբ, Ինստիտուտում միջազգայնացման գործառույթը տարրալուծված է և խրախուսվում են տարբեր ստորաբաժանումների (օր. ֆակուլտետ, ամբիոններ, որակի ապահովման բաժին և այլն) կամ անհատների կողմից նախաձեռնություններ (սովորաբար նախաձեռնությամբ հանդես եկած աշխատակիցը ղեկավարում է նախագիծը):

ՈԱԲ գործունեության միջազգայնացման ներուժի տեսանելի ցուցանիշ է բաժնի ակտիվ մասնակցությունը միջազգային գործընկերների հետ իրականացվող փորձի փոխանակման հանդիպումների և կոնֆերանսներին: ՈԱԲ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել են հեռակոնֆերանսներ, վեբինարներ, որտեղ ներկայացվել են բուհում իրականացվող հեռավար ուսուցման փորձն ու ձեռքբերումները, փոխանակվել սպորտի բուհերում հեռաուսուցման ազդեցություններն ու մարտահրավերները հաղթահարելու տեսլականով և գործնական խորհուրդներով:

Հաշվետու տարում Ինստիտուտը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև European Network of Living Lab-ի կազմակերպած «COVID-19-ը ի՞նչ դրական վերափոխումներ առաջացրեց բուհերում» ("How the COVID-19 has changed our Universities for good") հեռակոնֆերանսին:

Ինստիտուտում կոնկրետ քայլեր են իրականացվել նաև միջազգային համագործակցությունը կենտրոնացված և ապակենտրոնացված մակարդակում իրականացվելու համար: 2019-2020 ուստարում առաջին անգամ նախաձեռնողականություն է ցուցաբերվել միջազգային դրամաշնորհային ծրագրերին դիմելու ուղղությամբ և ներկայացվել է ընդհանուր թվով 7 միջազգային

[9] https://drive.google.com/drive/folders/15uT260PA8ITCezoTEIB3JQTOeX_fGmgy

դրամաշնորհային մրցութային հայտ, որոնց արդյունքները դեռևս հրապարակված չեն:

Հայտավորված ծրագրերը հնարավորություն կտան բուհին ուսումնասիրելու միջազգային համագործակցության արդյունքների ազդեցությունը կրթական ծրագրերի բարելավման, հետազոտահեն կրթական միջավայրի զարգացման վրա:

Սյսպիսով՝ նախնական պլանավորման փուլում դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունն ու իրագործումը հետապնդում են հիմնականում հետևյալ նպատակներ՝

1. Բուհերի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորում ու զարգացում, **FOCOS ծրագիր** Erasmus+ դրամաշնորհային ծրագրի շրջանակում:
2. ՀՀ բուհերի հետազոտական ինտեգրման ցանցի ստեղծում, **ARI-net:**
3. Բուդո մարզաձևերի ներառումը ֆիզիկական դաստիարակության ուսումնական ծրագրերում որպես բուլինգի կանխարգելման և շտկման միջոց, **Ճապոնիայի դեսպանատան կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագիր:**
4. Հոգեֆիզիոլոգիական և նեյրոմարքեթինգային գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծում, **Գիտության պետական կոմիտե:**
5. Զինակոչիկների հարմարման բժշկակենսաբանական գործոնների ուսումնասիրումը անձի անվտանգության ապահովման համատեքստում, **Գիտության պետական կոմիտե:**
6. Բուհի դասախոսների առողջացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված ծրագիր՝ ժամանակակից կանխարգելիչ և ֆիզկուլտուրային-առողջարարական տեխնոլոգիաների կիրառմամբ, **Գիտության պետական կոմիտե, ՌԴ հետ համատեղ:**
7. Տեղեկացված սերունդ, առողջ սերունդ, **Կալիֆորնիայի Համալսարանի հետ համատեղ ծրագիր** – Տեղեկացված սերունդ, առողջ սերունդ:

2019-2020 ուստարում ՄՀՋԾ բաժինը նշանակալի նախաձեռնողականություն է ցուցաբերել միջազգային վեբինարների և տեսակոնֆերանսերի կազմակերպման և անցկացման, բուհի աշխատակիցներին դրանցում ներգրավելու հարցում. ուշագրավ և արդիական թեմաներով ծավալված առցանց վեբինարներին զգալի մասնակցություն են ունեցել նաև ուսանողները, հնչեցրել իրենց հետաքրքրող հարցերն ու արտահայտել իրենց դիրքորոշումը, ինչը վկայում թե՛ ուսանողների հետաքրքրվածության աճի և՛ թե անգլերենով հաղորդակցվելու հմտությունների բարելավան մասին: Հեռավար սեմինարներ ու թրեյնինգներ են կազմակերպվել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների հետ, որոնք նպատակ ունեն խթանելու միջբուհական հաղորդակցության զարգացումը, նպաստելու ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի

շարժունակությանը՝ երաշխավորելով միջազգային համագործակցային ծրագրերի իրականացման շարունակականությունը:

Հաջողությամբ իրականացված նախաձեռնություններից են մասնավորապես հետևյալ վեբինարները՝

- ✓ «Covid 19: Managing through crisis» (Ճգնաժամային կառավարում) թեմայով
- ✓ Վեբինար «Sports injury prevention and return to sports after a prolonged break» թեմայով
- ✓ Վեբինար «New era of sports physiotherapy»
- ✓ Why sports education in India ? »
- ✓ «Need of sports education in India »
- ✓ «Emerging academic entrepreneur of India »
- ✓ «Nutrition & diet in sports »
- ✓ «Employment opportunities with sports education in India»

***2019-2020 ուսուցարում պլանավորված մի շարք միջազգային համագործակցային ծրագրեր չի հաջողվել իրականացվել համավարակով պայմանավորված սահմանափակումների հետևանքով, ինչպես օրինակ՝***

***1.*** «Սպորտը հանուն խաղաղության և առողջության» խորագրով ՀՖԿՍՊԻ 75-ամյակին նվիրված Միջազգային գիտական ֆորումի կազմակերպում և անցկացում

***2.*** Շարժունություն - Այց Հնդկաստանից ՀՖԿՍՊԻ

3. Շարժունություն - Այց Կալոմնայից ՀՖԿՍՊԻ

3. Գործուղում Իտալիա:

4. Գործուղում Լեհաստան:

5. Գործուղում Մոլդովա՝ մասնակցություն միջազգային կոնֆերանսին:

6. Գործուղում Կազան՝ «Օլիմպիական սպորտ և սպորտ բոլորի համար» միջազգային գիտական կոնգրես:

7. Դասախոսների վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ դրսից հրավիրված խոսնակների մասնակցությամբ

8. Միջազգային պրակտիկա դեպի Ուռեկի (մինչև 10 հոգի)

Միջազգային համագործակցության շրջանակում ուսումնասիրվել է նաև եվրոպական առաջավոր փորձը, կատարվել են համեմատական վերլուծություններ, ինչպես օրինակ Բելգիայի Լյովեն համալսարանի Լրագրության ֆակուլտետի հետ կնքված պայմանագրի շրջանակում իրականացված բենչմարքինգային հետազոտությունը, որի արդյունքները կիրառվել են կրթական ծրագրի բարելավման, ԿԾ մակարդակում «շարժունության պատուհանի» նախագծման գործընթացներում:

Բենչմարքինգի ընթացքում համադրվել են հենանիշ բուհի առարկայացանկերը, կրթական ծրագրի վերջնարդյունքները, գնահատման չափանիշներն ու մեթոդները: Ինչպես նշվում է բենչմարքինգի հաշվետվությունում, այն նպատակաուղղված է

էտալոնային (չափանմուշային) բուհի լավագույն փորձի ուսումնասիրմանը՝ ձգտելով տվյալների որակական և քանակական համեմատական վերլուծության հիման վրա բարելավել վերջնարդյունքահեն և ուսումնառողամետ կրթական միջավայրը, խթանել կրթական ծրագրի միջազգայնացումը, ներդնել «շարժունության պատուհանի» տարբեր ձևեր, նպաստել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետության շարունակական բարելավմանը:

Բենչմարքինգի արդյունքների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ կա մեծ հնարավորություն իրականացնելու մասնագիտական պրակտիկայի շարժունություն. պրակտիկայի ծրագրերը համադրելի են, շնորհվող կրեդիտներն ու աշխատածավալը նույն են, ընդհանրություններ կան նաև ակնկալվող վերջնարդյունքների ձևակերպումներում:

ՀՖԿՍՊԻ համեմատաբար մեծ պահանջարկ ունեցող «Մենեջմենթ» և «Մարքեթինգ» մագիստրոսի կրթական ծրագրերի միջազգայնացման հնարավորությունները ուսումնասիրելու նպատակով ևս իրականացվել է կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգ[10], որի արդյունքները հաշվի են առնվել ԿԾ պատասխանատու Սպորտի կառավարման և ամբիոնի մշակած վերափոխումների փաթեթում:

Այսպիսով՝ իրականացված աշխատանքները փաստում են այն մասին, որ ներկայումս միջազգային փոխգործակցության ծրագրեր ակտիվորեն ընթանում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ եվրոպական ու այլ արտասահմանյան հարթակներում:

Նշենք, որ այս տիրույթում իրականացված գործողություններն ու միջոցառումներն լուսաբանվել են առավելապես ինստիտուտի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, որը ներկայումս բուհի շահակիցների շրջանում տեղեկատվության տարածման մատչելի և ամենահաս միջոցն է:

Թեև վերջին տարում բուհում միջազգային համագործակցության ոլորտում բավականին դրական շարժընթաց է գրանցվել, դեռևս վերանայման ու բարելավման կարիք ունեն աշխատանքային ընթացակարգերն ու կանոնակարգերը, նախատեսվում է մշակել և ներդնել նաև մեթոդաբանական ուղենիշներ, քանի որ բուհում սակավաթիվ են դրամաշնորհային նախագծեր կազմող փորձառու աշխատողները, առկա է դրամաշնորհային նախագծեր մշակելու վերաբերյալ վերապատրաստումների անհրաժեշտություն, հատկապես ասպիրանտուրայում:

Ինստիտուտում դեռևս ցածր է ուսանողների և դասախոսների լեզվի իմացության մակարդակը, ինչը խոչընդոտում է միջազգային փոխանակման ծրագրերի արդյունավետ իրականացումը: Օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով 2020-2021 ուսումնական տարվանից ավելացվել են անգլերենի ժամերը (օտար լեզվի դասավանդումը կազմակերպվում է 3 կիսամյակում՝

[10] https://drive.google.com/drive/folders/15uT260PA8ITCezoTElB3JQTOeX_fGmgy

նախկին 1 կիսամյակի փոխարեն), մրցութային հավաքագրման արդյունքում ՊԴ կազմը համալրվել է օտար լեզվի դասավանդման բարձր որակավորում ունեցող դասախոսներով, վերանայվել են դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները:

| ՀՖԿՍՊԻ SWOT (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| ***ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ***<br>***ԱՌԱՋԸՆԹԱՑ*** | **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**<br>**ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ** |
| 1. ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքի ներդնում: Փոփոխված կառուցվածքում կառավարման հորիզոնական և ինտեգրալ կապերի ապահովում:<br>2. Կառավարման համակարգում առավել արդյունավետ մոտցումների ներդնում. որոշումների կայացման գործընթացում ներքին շահակիցների ներգրավվածության ապահովում:<br>3. ՀՖԿՍՊԻ Ռազմավարական ծրագրի (ՌԾ-ի) գնահատման ձևաչափի մշակում ըստ գործունեության արդյունավետության ցուցանիշների (ԳԱՑ-երի):<br>4. Ինստիտուտի կրթական և այլ գործընթացները կարգավորող փաստաթղթային հենքի վերանայում և վերամշակում:<br>5. Ներքին փաստաթղթաշրջանառության և հաղորդակցման գործընթացներում էլեկտրոնային գործիքակազմի ներդնումն ու գործարկումը:<br>6. Գնահատականների մուտքագրման և պահպանման էլեկտրոնային համակարգի մշակում:<br>7. Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման և համալրման գործընթացի իրականացումը հրապարակայնացված և բաց մրցութային ընթացակարգի միջոցով: | 1. ՀՖԿՍՊԻ ռազմավարական զարգացման և որակի ապահովման գործընթացներում արտաքին առանցքային շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ) մասնակցության և նախաձեռնողականության ցածր մակարդակ:<br>2. Ենթակառուցվածքային մակարդակում արտաքին գործոնների համակարգային վերլուծության բացակայություն:<br>3. Ֆինանսական մուտքերի կենտրոնացվածություն՝ կախում հիմնականում մեկ աղբյուրից ուսման վարձավճարներից:<br>4. Ֆինանսական պլանավորման և ֆինանսական մուտքերի ու ռեսուրսների բաշխման ոչ հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:<br>5. Ռիսկերի կառավարման համակարգի ոչ լիարժեք գործադրում և ճգնաժամերի դիմակայմանն ուղղված ռազմավարության թերի կիրառում:<br>6. Գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածությունը:<br>7. Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման մշակույթի և դրա կանոնակարգման գործընթացների բացակայություն: |

| | |
|---|---|
| 8. Գործատու և օտարերկրյա լեզվակիր դասախոսներով ՊԴ կազմի համալրվածությունը:<br>9. Օտար լեզուների ուսուցման աշխատածավալի մեծացում:<br>10. Կրթական ծրագրերի իրականացման բարենպաստ ուսումնական միջավայրի շարունակական բարելավում՝ որպես զարգացման առաջնահերթություն:<br>11. Նյութատեխնիկական բազայի թարմացում, արդիականացում և բազմազանեցում, աշխատանքային պայմանների բարելավում:<br>12. ՀՖԿՍՊԻ ռազմավարական կառավարման, ենթակառուցվածքային և վարչարարական փոփոխությունների իրականացում:<br>13. Հատուկ կարիքներ ունեցող ուսումնառողների համար բուհի շենքային, լսարանային և գույքային պայմանների մատչելիության ապահովում:<br>14. Տեղական շուկայում պահանջարկ ունեցող նոր կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը՝ «Սպորտի տուրիզմ» մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման արտոնումը ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից<br>15. Ինստիտուտում իրականացվող կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգի ներդնում, բակալավրի երեք և մագիստրատուրայի չորս ՄԿԾ-ների փորձագիտական անկախ գնահատման իրականցում, բարելավման առաջարկությունների հիման վրա ԿԾ-ի վերանայում և վերամշակում: | 8. ՊԴ կազմի ընդհանուր հաստիքացուցակում օտարերկրյա գիտական կադրերի ներգրավվածության բացակայություն:<br>9. ՊԴ կազմի մասնագիտական աճին առնչվող ինստիտուցիոնալ քաղաքականության ոչ լիարժեք կիրառում:<br>10. Դասերին ուսանողների հաճախելիության դեռևս ցածր մակարդակ:<br>11. Ուսանողների գիտելիքների ու հմտությունների ստուգման և գնահատման չափանիշների ու կրթական վերջնարդյունքների միջև թույլ կապ:<br>12. Ուսուցման գործընթացում ուսանողի առաջընթացի օբյեկտիվ և թափանցիկ արձանագրման համար գնահատման քաղաքականության քաղաքականության, գնահատման մեթոդների անկատարություն:<br>13. Շրջանարվարտների զբաղվածության տվյլաների բազայի բացակայություն:<br>14. Ուսանողների շարժունությանը նպաստող ոչ կանոնակարգված ընթացակարգեր և ուսանողների ակադեմիական շարժունության արդյունքում արձանագրված առաջընթացի շարունակական վերլուծությունների բացակայություն:<br>15. ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքում առկա տեղեկատվության ոչ համապարփակություն և տեղեկույթի հատվածային ներկայացում և կայքի թերի գործարկում: |

| | |
|---|---|
| 16. Հասարակության հետ կապերի ակտիվացում, բուհի գործունեության հանրայնացում, լուսաբանումների միջոցով Ինստիտուտում գործող մանագիտությունների գրավչության բարձրացում:<br>17. Դիմորդների և ընդունվողների մեծ ներհոսքի ապահովում՝ 697 ուսանող, որը ամենաբարձր ցուցանիշն է վերջին տասը տարվա համար:<br>18. Ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված համալիր մոտեցումների գործարկում, ծածկագրված քննակարգի ներդնում:<br>19. ՀՖԿՍՊԻ աշխատակազմի կատարողական բարելավմանը ուղղված ռազմավարության և մոտեցումների մշակում:<br>20. Դասախոսական կազմի որակավորման բարձրացման և կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումների իրականացում: «Համակցված ուսուցում» արտաքին վերապատրաստման իրականցում՝ առցանց ուսուցման արդյունավետության բարձրացմանն ու որակի ապահովմանը օժանդակելու նպատակով:<br>21. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսում, հավելավճարի հատկացում միջազգային վարկանշավորված պարբերականներում հրապարակումների համար:<br>22. Գործատու-բուհ կապերի ընդլայնում, ուսանողական պրակտիկայի հնարավորությունների ընդլայնման նպատակով նոր գործընկերների ձեռքբերում, | 16. Հաջողված փորձի փոխանակման գործընթացների թույլ կառավարման հետևանքով՝ տարբեր ամբիոնների և ՀՖԿՍՊԻ անհամաչափ զարգացվածությունը:<br>17. .ՈԱ մեխանիզմների և գործիքակազմի հուսալիությունը և վավերությունը հավաստող մեխազնիզմների թույլ կիրառումը:<br>18. Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը ՈՆԱ գործընթացներում: |

| | |
|---|---|
| համագործակցության նոր պայմանագրերի և հուշագրերի կնքում:<br>23. Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության ակտիվացում՝ բուհի կողմից մատուցվող կրթական ծառայությունների մասին տեղեկատվության տրամադրման, բուհի ղեկավար կազմի կողմից տրվող հարցազրույցների և մամուլի ասուլիսների միջոցով:<br>24. Որակի ապահովման ներքին համակարգի և գործող մեխանիզմների մշտադիտարկում, արտաքին գնահատումների գործիքակազմի արդյունավետության վերլուծության իրականացում:<br>25. ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի կողմից ներքին շահակիցների հետ հետադարձ կայուն կապի ապահովում, հարցումների իրականացում, վերուծում, հետադարձ կարծիքի ուսումնասիրության և գնահատման հիման վրա բարելավումների իրականացում:<br>26. Ներքին ՈԱ-ի նոր մեխանիզմների և չափանիշների մշակում ու կիրառում՝ միտված ՄԿԾ-ների բովանդակության, ուսումնառության արդյունքների ու տվյալների հավաստի գնահատմանը:<br>27. ՀՖԿՍՊԻ միջազգայնացման գործընթացի խթանում՝ օտարերկրյա գործընկեր համալսարանների և միջազգային կազմակերպությունների, այլ պետությունների | |

| | |
|---|---|
| ներկայացուցիչների հետ գիտակրթական համատեղ ծրագրերի մշակման միջոցով:<br>28. Գրավչություն օտարերկրյա ուսանողների համար և նրանց ներհոսք, ուսանողական և դասախոսական շարժունության ծրագրերի իրականացման նախադրյալների ստեղծում:<br>29. Նախապատրաստական դասընթացների մակարդակում օտար լեզվով կրթական ծրագրի մեկնարկ և իրականացում:<br>30. Միջազգային առանցքային կառույցների հետ համատեղ տեսակոնֆերանսների կազմակերպում և անցկացում, կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի իրականացում, միջազգային դրամաշնորային ծրագրերին մասնակցության հայտերի ներկայացում:<br>31. Լրագրություն մագիստրոսի կրթական ծրագրի ինքնագնահատման իրականացում՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում: | |
| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ |
| 1. ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքի փոփոխություններով պայմանավորված զարգացման հնարավորություններ:<br>2. ՀՖԿՍՊԻ 2022-2027 զարգացման նոր ռազմավարական պլանի, գործողությունների իրականացման ծրագրի մշակում և ներդնում, որտեղ սահմանված կլինեն չափելի նպատակներ (SMART), հստակ արտացոլված կլինի դրանց կապը առաքելության հետ, մշակված կլինեն կատարողականի | 1. Կրթության օրենսդրությանը և ուսումնական հաստատությունների իրավակազմակերպական ձևերին առնչվող օրենսդրական հենքի անկատարություն և սահմանափակություն:<br>2. Պետության՝ որպես հիմնադրի կողմից պետական բուհի կառավարման մոտեցումների, մեթոդների և կառուցակարգերի փոփոխություն: |

| | |
|---|---|
| ցուցիչներն ու ենթացուցիչները, գործողությունների վերջնաժամկետներն ու պատասխանատուները:<br>3. ՀՖԿՍՊԻ համապատասխան շենքային և լսարանային պայմանների, տեխնոլոգիական բազայի բարելավում:<br>4. Արտաքին ֆինանսական մուտքերի ավելացում և բազմազանեցում ձեռնարկատիրական գործունեության տեսակների և ընդլայնման ու լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների ավելացման միջոցով:<br>5. ՀՖԿՍՊի ֆինանսավորման համակարգի ապակենտրոնացում և ծրագրային բյուջեների կազմում և բաշխում ըստ ռազմավարական գերակա ուղղությունների ու ոլորտների:<br>6. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշներ՝ պայմանավորված կրթության ձևերի բազմազանեցմամբ և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությամբ:<br>7. ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման ցուցանիշները բարձրացնելու նպատակով մասնագիտությունների գրավչության աստիճանի բարձրացում:<br>8. Բուհ ընդունելության կարգի և պայմանների վերանայում՝ բոլոր կրթական ծրագրերի համար սահմանելով մուտքային պահանջներ՝ առաջնայնություն տալով դիմորդների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին:<br>9.Երիտասարդ դասախոսների մենթորության և մասնագիտական կատարելագործման խրախուսմանն ուղղված մեխանիզմների մշակում և կիրառում:<br>10.Արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական վերլուծությունների պարբերական իրականացում, կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում: | 3.Բուհում գործողությունները և զարգացումները միասնականացնող և ուղղորդող տեսլականի բացակայությունը:<br>4.Շուկայի պահանջների փոփոխություններ շահակիցների պահանջների և մրցակցության ավելացում:<br>5.Որակավորումների արժանահավատ շնորհման հավաստումը, շնորհվող որակավորման ուսանողական հետազոտությունների սերտ կապի բացակայությունը:<br>6.ՀՖԿՍՊԻ ֆինանսական ներհոսքերի զգալի կախվածություն դիմորդների ընդունելության ցուցանիշներից՝ պայմանավորված ժողովրդագրական հավանական բացասական միտումներով և աշխատաշուկայում մի շարք մասնագիտությունների պահանջարկի նվազմամբ:<br>7.Ազգային աշխատաշուկայի ու հասարակական փոփոխությունների արդյունքում ՀՖԿՍՊԻ-ի և այլ բուհերի միջև մրցակցության սրում՝ պայմանավորված համանման մասնագիտությունների և/կամ ՄԿԾ-երի թողարկմամբ:<br>8.Մի քանի կրթական ծրագրերով պրոֆեսորադասախոսական կազմի ծերացում:<br>9.Համավարակի բռնկումն ու տարածումը, պատերազմական գործողությունների հետևանքով առաջացող տնտեսական ու սոցիալական հետևանքները: |

| | |
|---|---|
| 11.Համագործակցության ընդլայնում միջազգային գիտակրթական, մասնագիտական, ֆինանսավորող կառույցների, ընկերությունների և կազմակերպությունների հետ:<br>12. Բուհում իրականացվող հետազոտությունների նպատակային ֆինանսավորում:<br>13. ՀՖԿՍՊԻ համագործակցային ձևաչափերի կիրառման դաշտի ընդլայնում, Ինստիտուտի և ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև պայմանագրերի կնքում՝ ուսանողների հավաքագրման նպատակով:<br>14.Օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման ոլորտում ստեղծված հնարավորությունների զարգացում:<br>15. ՀՖԿՍՊԻ աշխատակիցների վերապատրաստման ամբողջական փաթեթի մշակում՝ դրամաշնորհների առաջարկների և նախագծերի ներկայացման համար:<br>16. Հասարակության հետ կապերի ամրապնդում և շահակիցների հետ համագործակցության զարգացում:<br>17. ՀՖԿՍՊԻ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման աշխատանքների ընդլայնում, արդյունավետության բարձրացում (օրինակ՝ բարձրորակ տեղեկատվական նյութերի պատրաստում, դրանց տարածում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում և բուհերում) և հետադարձ կապի ձևերի բազմազանեցում՝ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային ժամանակակից ռեսուրսների ավելի ինտենսիվ օգտագործմամբ:<br>18. Որակի ապահովման համակարգի դերի բարձրացումը բուհի կառավարման գործընթացներում: | |

| | |
|---|---|
| 19. Արտաքին շահակիցների/ գործատուների հետ փոխվստահելի հարաբերությունների ամրապնդում, ՈԱ գործընթացում նրանց դերակատարության ընդլայնում՝ պասիվ ներգրավվածությունից անցնելով գործընկերային ներգրավվածության, շահադրդելով վերջիններիս ավելի պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել կրթական ծրագրերի որակի բարելավման աշխատանքներում:<br>20. Բուհի բարելավումների վրա ՈՆԱ համակարգի ազդեցության պարբերական գնահատում: | |

Ամփոփելով ՀՖԿՍՊԻ 2019-2020 ուս. տարվա գործունեությունը կարող ենք եզրակացնել, որ հաշվետու ժամանակաշրջանում բուհը մեծ քայլեր է կատարել կրթության որակի, միջազգայնացման, ռեսուրսների պլանավորման և իրականացման, սոցիալական պատասխանատվության, բուհի ճանաչելիության ուղղություններով: Միևնույն ժամանակ իրականացված վեչլուծությունը հնարավորություն ընձեռեց վերհանել մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են անհապաղ լուծումներ:

Մասնավորապես,

1. ՀՖԿՍՊԻ ռազմավարական զարգացման և որակի ապահովման գործընթացներում արտաքին առանցքային շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ) մասնակցության և նախաձեռնողականության ցածր մակարդակի խնդրի վերացման ուղղությամբ պլանավորվում է իրականացնել պարբերական հանդիպումներ՝ կլոր–սեղան քննարկումների, գիտաժողովների, սեմինարների, ինչպես նաև գրավոր հարցումների միջոցով:
2. Ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացիայի ուղղությամբ նախանշվում են համակարգային աշխատանքներ՝ դրամաշնորհային ծրագրերի հայտերի ներկայացում, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի և հովանավորչական մշակույթի ներդրում: Նախատեսվում է ֆինանսների վերլուծության, պլանավորման և ֆինանսական հոսքերի կառավարման մեխանիզմների արդիականացում, ինչպես նաև ֆինանսավորման պլանավորման և ռեսուրսների բաշխման քաղաքականության, համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի մշակում:
3. Բուհում գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածության հիմնախնդրի լուծման նպատակով արդեն իսկ իրականացվում են համալիր միջոցառումներ՝ բարձր վարկանիշ ունեցող միջազգային շտեմարաններում տպագրությունների խրախուսում, ուսումնական, գիտական ձեռնարկների և մենագրությունների խրախուսում, ուսանողական գիտական ընկերության աշխատանքների արդիականացում, երիտասարդ գիտնականների, ասպիրանտների և

ուսանողների գիտական աշխատանքների տպագրության համար հիմնադրված պարբերական: Դրա հետ մեկտեղ նախատեսվում է բուհում ներդնել վարկանիշավորման համակարգ ՊԴ անձնակազմի համար, որտեղ առանցքային տեղ պետք է զբաղեցնի գիտական գործունեության բաղադրիչը:

4. Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման մշակույթի և դրա կանոնակարգման գործընթացների ներդրում: Այդ ուղղությամբ նախատեսվում է եռակողմ հանդիպումների իրականացում, որտեղ կներկայացվեն բուհում իրականացվելիք գիտահետազոտական, գործնական աշխատանքների արդյունքները և դրանց ներդրման անհրաժեշտությունը և արդիականությունը:
5. ՊԴ կազմի ընդհանուր հաստիքացուցակում օտարերկրյա կադրերի ներգրավում: Հեռավար ուսուցման ձևաչափի ներդրումը բուհում հնարավորություն է ընձեռում ուսումնական գործընթացում ներառել ոլորտի լավագույն օտարերկրյա մասնագետներին:
6. Դասերին ուսանողների հաճախելիության մակարդակի բարձրացման նպատակով նախատեսվում է մշակել ներքին կանոնակարգ, համաձայն որի բացակայությունների քանակը կնախանշի ուսանողի ստուգարքային և քննական պահանջները:
7. Ուսանողների գիտելիքների ու հմտությունների ստուգման և գնահատման չափանիշների ու կրթական վերջնարդյունքների միջև կապերի ուժեղացման նպատակով վերանայվել են ուսումնառության, գնահատման մեթոդները համապատասխան կրթական ծրագրերի, որոնք կրելու են շարունակական բնույթ: Նախատեսվում է գնահատման մեթոդների հստակ քայլերի հիմնավորում և ընթացակարգերի մշակում:
8. Շրջանարվարտների զբաղվածության տվյալների բազայի ներդրում: Ուսանողների շարժունությանը նպաստող ոչ կանոնակարգված ընթացակարգեր և ուսանողների ակադեմիական շարժունության արդյունքում արձանագրված առաջընթացի շարունակական վերլուծությունների ներդրում:

9. ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքի արդիականացում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:
10. Միջամբիոնային, ներբուհական, միջբուհական և միջազգային կոլաբորացիաների ընդլայնում բուհում գործող բոլոր կրթական ծրագրերի ուղղությամբ:
11. ՈԱ մեխանիզմների և գործիքակազմի հուսալիության և վավերության կառուցակարգերի ներդրում և զարգացում:
12. Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառում, մշտադիտարկման, հետադարձ կապի ապահովման և բարելավման գործընացների շարունակականության ապահովում ՈՆԱ գործընթացներում: